# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1885. ՄԱՅԻՍ. № 3 ՅՈՒՆԻՍ. Բ. ՏԱՐԻ.


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Երես.

1. Ուսուցչացու — աշակերտի վարմունքը Մանկավարժանոցում . . . . . . 133
2. Ներկայ ազգային լուսաւորութիւն Ֆրանսիայում . . . . . . . . . . 139
3. Ներկայ ազգային լուսաւորութիւն Բէլժիքում . . . . . . . . . . 144
4. Իմ Վէրջ (բանաստ.) . . . . . . 147
5. Փորձական կամ օրինակելի դաս կրօնից Աստուծոյ յատկութիւնների մասին . . 148
6. Կրօնի գ. օրինակելի դաս Աստուծոյ յատկութիւնների մասին . . . . . 153
7. Կրօնական և բարոյական վիճակ և Հայ կղեր . . . . . . . . . . 158
8. Կարինի (Էրզրումի) Հայերի բարոյական և մտաւորական կացութիւն . . . . 167
9. Սէրտողութիւն Ճաշից յետոյ . . . . 178
10. Ֆրանսիական միջնական դպրոցների ուսուցչի նշանակման դրութիւն . . . 182
11. Հրաւէր դէպ մի երկրագործական դպրոց . 187
12. Աշուն (բանաստ.) . . . . . . . 192
13. Ի՞նչպէս պէտք է ապրել բաղդաւոր լինելու համար . . . . . . . . . . . 193
14. Խմբագրութեան պատասխաններ . . . 195
15. Ծանուցմունք կազմի 2, 3 և 4 երեսներում.



ՏԻՓԼԻՍ

ՄԿՐՏԻՉ ՂԱԼԱԹ-ԲԱՐԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

1885

# ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

## ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ ամսագիր երեխաների և դաստիարակների համար։ Տարեկան գինն է 3 ման. հասցէն. Тифлисъ. Редакція „Агбюръ“.



...-Հրատ. Տ. Նազարեան.

## ...ՆՔ

Քաղա... ...ութաթերթ. Տարեկան գինը 5... Ред. „Ардзаганкъ.“

...չ Ա. Յովհաննիսեան.

## ... ՄԱՄՈՒԼ

Ամսագիր հրատարակվում է Զմիւռնիայում։ Տարեկան գինն է 4 մէջիտիէ արծաթ. խմբագիր-տնօրէն Մ. Մամուրեան։ Ռուսաստանի Հայերը կարող են բաժանորդ գրվել պ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան միջոցով Թիֆլիսում։

---

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Իւրաքանչիւր տետրը 2 թերթ։ Երկու ամիս 1 տետր։ Տարեկան գինը 3 ման.

Հասցէն. Ахалцихъ. Редакціи МАНКАВАРЖАНОЦЪ.

1885. ՄԱՅԻՍ. № 3 ՅՈՒՆԻՍ. Բ. ՏԱՐԻ։


Faisons notre devoir, le reste est vanité. (Մենք մեր պարտքը կատարենք, մնացածն ունայնութիւն է։)

## ՈՒՍՈՒՑՉԱՅՈՒ—ԱՇԱԿԵՐՏԻ ՎԱՐՄՈՒՆՔԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑՈՒՄ։

Որովհետև մանկավարժանոցի ուսումն առաւելութիւններ ունի, մանկավարժանոցում անցուցած թանկագին ժամանակի ոչ մի մասնիկը պիտի զուր չկորչի։ (Միևնոյնը ասելու է այն աշակերտների վերաբերմամբ, որոնք ուսուցչութեան համար են պատրաստվում հոգևոր դպրոցներում, ուսուցչութեան համար պատրաստվողների պարտքերը բոլորովին նոյնանման լինելով։) Եւ այս ժամանակը չէ պատկանում աշակերտին, այլ այն հասարակութեանը, որը հիմնել է մանկավարժանոցը, ոչ թէ մանկավարժանոցում սովորող երիտասարդների օգտի համար, այլ առաւելապէս այն մանուկների օգտին, որոնց նոքա պիտի կրթեն ապագայում։

Այն աշակերտը, որը բաղդաւորվել է ման-

կավարժանոցում ընդունվելու և որն իւր սխալներով ուսուցիչ դառնալու արժանաւորութիւններ և ընդունակութիւններ չէ կարողանում ձեռք բերել, մի տեսակ զոհողութիւն է անում հասարակութենից։ Նա նմանապէս յանցաւոր է մանուկների առաջ, որովհետև եթէ նա չլինէր, մի ուրիշը կդառնար նոցա համար օգտաւէտ ուսուցիչ, այն պաշտօնը վարելով, որ ինքն կյափշտակէ։

Հասարակական առողջ դատողութիւնն ամենևին չէ սխալվում այս մասին։ Ընդհանրապէս շատ և շատ աւելի են պահանջում ուսուցչացու—աշակերտներից, քան թէ այն երիտասարդներից, որոնք իրանց ուսմամբ ուրիշ ասպարէզների համար են պատրաստվում։ Սովորաբար դաստիարակները բաւական ներողամիտ են այն սխալների համար, որ անումեն պատանեակները թեթևամտութեամբ, և պատժելով նոցա իբրև օրինակ ուրիշներին, դաստիարակները նոցա ոչինչ նշանակութիւն չեն տալիս, երբեմն մինչև անգամ ծիծաղումեն այն սխալների վերա նոյն իսկ նոցա դատապարտելիս։ Սակայն այս ներողամտութիւնը չէ տարածվում ուսուցչացու—աշակերտների վերա. դաստիարակները կամենումեն, որ նոքա վաղ թափանձվին այն ոգով, որը պիտի ոգևորէ նոցա ասպարէզում, կամենումեն, որ նոցա հնազանդութիւնը, նոցա ջանասիրութիւնն առ ուսումն, նոցա դատողութիւնն անպարսաւելի լինին։

Աշակերտները բաղդաւոր պէտի Համարեն իրանց, որ Հաստատակամութիւնը և գործողական վարժութիւնները նոցա վերաբերմամբ այսպիսի խիստ տրամադրութիւններ ունին, որոնք նպատակումեն դպրոցում անփոփոխ պահպանելու ստորադրելութեան և աշխատաութեան սովորութիւնները:

Ուրեմն աշակերտները մանկավարժանոցում գտնված ամբողջ ժամանակը միայն մի միտք պիտի ունենան, այն է իրանց բոլոր պարտքերը կատարել:

Ո՞րոնք են այս պարտքերը: Քրիստոնէի պարտքերից յետոյ, որոնք բոլոր պարտքերից ամենանուիրական և ամենանշանաւոր են և որոնց Հետ պիտի ծանօթացնեն կրօնուսոյցները, մանկավարժանոցի աշակերտների գլխաւոր պարտքերն են. ամենախիստ Հնազանդութիւն կանոնին, կատարեալ Հաւատարմութիւն առ իրանց վերատեսուչն և անկեղծ բարեացակամութիւն առ իրանց ընկերները: Սոցա վերա փոքր ինչ մանրամասնօրէն կխօսեմ:

Նախ քան Հասկանալու է թէ ինչ է այս պարտքերից առաջինը: Երկու տեսակ Հնազանդութիւն կայ. առաջինն ես արտաքին Հնազանդութիւն կանուանեմ: Այս Հնազանդութիւնը նորա մէջ է կայանում, որ աշակերտը Հրաժարվումէ նորանից, ինչ որ արգելված է և անումէ այն, ինչ որ պատուիրված է, այս Հնազանդութիւնը կանոնաւորումէ խօսքերը և գործողութիւնները. Նա ա-

զատումէ աշակերտին յանդիմանութենից։ Անբաղդաբար պատանեակները մեծ մասամբ միմիայն այս հնազանդութիւն են ճանաչում։ Սակայն ուսուցչացու—աշակերտը սորանով երբէք պիտի չբաւականանայ։ Կայ միւս հնազանդութիւն, որով միայն ևէթ գին ունի առաջինը. սորան կանուանեմ կամաւոր հնազանդութիւն կամ սրտի հնազանդութիւն։ Այս հնազանդութիւնը չէ կանոնաւորում, առաջնի պէս, մարդի արտաքին գործողութիւնները. այլև հոգու շարժմունքը։ Այս հնազանդութեամբ է միմիայն աշակերտը ճշմարտապէս հնազանդ և հլու։ Նա չէ բաւականանում հնազանդելով, այլ նա հնազանդումէ ուրախութեամբ։ Նա չէ հետևում միայն իրան տուած հրամանին, այլ աշխատումէ նորան վաղագոյն կատարել։ Աշակերտը չէ յարմարվում միայն որոշ պատուէրին, այլ նա յարմարվումէ վարչութեան ցանկութեանը, մտքին։ Ինչոր նորան ասումեն կատարել, նա այն սիրումէ, ինչից որ նորան ասումեն խոյս տալ, նա այն ատումէ։

Վերատեսչին ցոյց տուած հնազանդութիւնն այն ժամանակ միայն գին կունենայ, երբոր նա կապված կլինի հաւատարմութեան կամ վստահութեան հետ այսինքն ներքին մի տրամադրութեան հետ, համարելով նորան երկրորդ հայր, պատրաստ լինելով նորան ամենայն ինչ ասելու և նորան միշտ հաւատալու։ Նա ներկայացուցիչ է աշակերտների համար ծնողների

կողմից, որոնցից նոքա հեռացած են, հասարակութեան կողմից, որը հոգումէ և խնամումէ նոցա կրթութիւնը... Նա է աշակերտների ուսուցիչ, նոցա պաշտպան, նոցա բարեկամ։ Ո՞վ կարող է նորանից աւելի հասկացնել աշակերտներին թէ նոցա բաղդաւորութիւնն իրանց պարտք կատարելու մէջ է։

Ուրեմն աշակերտները նորան ծայրագոյն իշխանութիւն պիտի յանձնեն իրանց բոլոր մտքերի վերաբերմամբ։ Որքան մոլորութիւն կլինէր աշակերտների կողմից, եթէ նոքա նայէին իրանց վերատեսչին իբրև մի մարդի, որ իրանց միջոց պիտի տայ միայն իրանց սպասող քննութիւնն յաջողութեամբ վերջացնելու։ Նորա պաշտօնն է միանգամայն նորոգել աշակերտներին, ընտելացնելով նոցա այն բարոյական սովորութիւնների հետ, որոնք նոցա արժանի կդարձնեն ժամանակով իրանց ուսուցչական պաշտօնը վարելու։ Ի՞նչպէս կկարողանայ նա այս խնդիրը կատարել, եթէ աշակերտների սիրտը չէ նորա համար իբրև մի բաց գիրք, որի մէջ նա կարողանար ամեն րոպէ կարդալ։ Ի՞նչպէս կկարողանայ նա այդ, եթէ աշակերտները չեն հետևի նորա մտքերին մի փառաբանական հնազանդութեամբ։ Աշակերտներն ունին նոյնպէս կատարելու պարտքեր իրանց դասակիցների վերաբերմամբ, որոնք կարող են ամփոփվել երկու գլխաւոր պարտքերի մէջ. բարեացկամութեան և բարի օրինակի։ Միշտ ոգևորված առ իրանց ընկեր-

ներն եղբայրական զգացմունքով, աշակերտները պիտի չիմանան ոչ կռիւներ, ոչ ատելութիւն, ոչ նախանձ։ Նոքա պիտի ցաւակցեն իրանց ընկերներին նոյն պակասութիւնների համար, որոնք երբէք ծաղրածութեան առարկայ պիտի չլինին։ Աշակերտները պիտի ուրախանան իրանց ընկերների յաջողութիւնների վերա, որոնք պիտի զարթեցնեն իրանց նախանձաւորութիւնը, առանց երբէք չարանախանձ դրդուելու։ Նոքա պիտի մտաբերեն մանաւանդ, որ իրանց համար սրբազան պարտաւորութիւն է փոխադարձաբար քաջալերել իրանց ընկերակիցներին առ բարին իրանց խօսքերով և օրինակներով։ Այս ընկերների վատ օրինակն աւելի պատանեակների կորուստի պատճառ է եղել, քան թէ ուսուցիչների օգտաւէտ դասերը կարողացել են նոցա փրկել։

Բաւական է երբեմն մի խօսք, մի շարժումն, մի հայեացք մատաղ սիրտը դէպի անհնազանդութիւն դրդուելու համար և անշուշտ հետևաբար դէպի ամենայն արատները, որոնք հետևանք են միշտ անհնազանդութեանը։ Նոքա այնպէս պիտի վարվին, որ մանկավարժանոցից դուրս գալիս կարող լինին տալ իրանց այս մխիթարական վկայականը։ «Իմ ընկերներից ոչ մին երբէք տեսած չէ ինձ մի գործ անելիս, երբէք լսած չէ ինձանից մի խօսք ասելիս, որ կարողանար նորան բարի ճանապարհից մոլորեցնել։» Նոքա բարեկամաբար

պէտի ապրէն ամենքի հետ, և մտերմաբար սրտակից պէտի լինին միայն նոցա հետ, որոնց մէջ յայտնապէս կերևի ձգտումն դէպի առաքինութիւն։

---

## ՆԵՐԿԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ։

Վերջին ժամանակներս բոլոր քաղաքակիրթ տէրութիւնները ազգային կրթութեան վերա առանձին ուշք են դարձնում։ Բոլոր տէրութիւնների օրէնսդրութիւնք ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար միջոցներ է որոնում։ Կառավարութիւնները ամեն կերպով քաջալերումեն գրագիտութեան զարգանալուն։ Մանկավարժութիւնք ամեն կողմից ուսումնասիրումէ դպրոցական հարցը։ Լուսաւորութեան նախարարութեան եկամուտքը շատանումէ։ Հետզհետէ այն խելքին են գալիս, որ մարդիկներին տգիտութեան մէջ թողնելու փոխանակ լուսաւորելը ոչ միայն մարդասիրութիւն, հապա նաև օգտակար է համարվում տէրութեան համար։ Թէև դեռ ևս երբեմն տեղ տեղ հին իմաստակութիւններ լսվումեն, երբ թէ ժողովուրդը կրթելը վտանգաւոր է, կամ թէ գրագիտութիւնը միայն բարքերի ապականութիւն է առաջ բերում, և կամ թէ ամբոխի ագէտ մնալն աւելի լաւ է և այլն,—բայց այժմ կառավարութիւնն և ոչ միայն համոզվեցաւ, որ այդ կարծիքները սխալ են, հապա նաև թէ

կրթված ժողովրդին աւելի հեշտ է կառավարելը, քան չկրթվածին։ Անհեթեթ հասկացողութիւն և անսովոր կանխակալ կարծիք ոչ մի տեղ այնքան չի զարգանայ, որքան անգրագէտ ժողովրդի մէջ, որն իւրաքանչիւր անբարեխիղճ մարդի ասածներին հաւատում է։ Այդպիսի մարդիկների վնասակար ազդեցութիւնը միայն դպրոցը կարող է ոչնչացնել, որոնց օգուտը բնութեան բարեխիղճ և դիւրահաւան որդիներին ճանապարհից դուրս բերելն է և պատճառն այս է, որ այժմ կառավարութիւնները և բոլոր լուսաւորված երկրների մանկավարժները ժողովրդական սկզբնական դպրոցների վերա մեծ ուշք են դարձնում։

Վերջին ժամանակներս ազգային կրթութեան համար բոլոր տէրութիւններից աւելի Ֆրանսիան աշխատեց, որը հինգ տարի առաջ սկզբնական ուսման ուղղութիւնը բոլորովին նորոգեց։ Փոքրիկ մանուկների երկսեռ մանկանոցներից (écoles maternelles) սկսած մինչև Սէն—Կլուի և Ֆոնտէնէյ—օ-ռօզի բարձրագոյն մանկավարժանոցները, որտեղ վիճակային ուսուցիչներ պատրաստելու և կրթելու համար դաստիարակներ են պատրաստվում, մանկավարժական միևնոյն ուղղութիւնն է տիրում։ Նոյնպէս նշանաւոր է Ֆրանսիայում «միջազգային կրթութեան» բոլորովին նոր գաղափարը։ Արդէն այժմ սկզբնական դըպրոցների (écoles primaires) լաւագոյն աշակերտներին մի երկու տարով ուղարկումէն գերմանական Զվեյցերիայի դպրոցները, ուր ծանօթանումէն երկրի սովորութիւնների, կրթութեան եղանակների, մանկավարժական միջոցների և գերմանական լեզուի

հետ։ Լիվէրպուլ, Գլասգօու, մինչև անգամ Բօստոն և կամենումեն աշակերտների այդպիսի գաղթականութիւններ ուղարկել։ Թէև առաջ և արտասահմանեան դպրոցներում սովորող երիտասարդները շօշափելի օգուտով էին վերադառնում, բայց այդպիսիները շատ քիչ էին. այն ինչ այժմ աշակերտական գաղթականութիւնը հասարակութեան ստորին դասակարգին և մատչելի է և սա շատ թիւր կարծիքների և ցեղերի թշնամական յարաբերութիւններին վերջանալուն պիտի նպաստէ ի հարկէ։ Սկզբնական դպրոցներում ձեռնաշխատութիւն (travail manuel) մուծանելը, որը Ֆրանսիայում բաւական հիմք գտել է, թէև դորա հետևանքը դեռ բոլորովին պարզված չէ, նոյնպէս նորութիւն է։ Սա Ժ. Ժ. Ռուսօի գաղափարն է, որով իւր Էմիլին, հարուստ ազնուականի որդուն, կամենումէր ժողովրդին մօտեցնել։ Ներկայ դաստիարակութեան խնդիրը բոլոր ժողովուրդը կրթելն է։ Բայց մտաւոր զարգացումին արհամարհանք պիտի չզարթեցնէ դէպի ձեռնաշխատութիւնը։ Երեխան գիրքը տեսնելով պիտի չմոռանայ գործիքը, որով իւր հայրը հողը կամ հում նիւթն է մշակում։ Սկզբնական կրթութիւնն իւր նպատակին հասած չի լինի, եթէ դպրոցը երկրագործի ու արուեստաւորի փոխանակ աստիճանաւոր և վարժուհի պատրաստէ։ Միւս կողմից գիտութիւնը միջոց կտայ արուեստաւոր մարդին իւր պարապմունք և բնական ոյժը աւելի օգտակար կերպով կեանքի պահանջներին յարմարեցնելուն։ Այդ իսկ պատճառով Փարիզի մէջ Տիւլ-լէ փողոցում ձեռնաշխատութեան մանկավարժա-

նոց է բացված, ուր դաստիարակներ և ուսուցիչներ վայտի և երկաթի գործնականապէս ինչպէս պատրաստելը ցոյց են տալիս։ Սովորական դպրոցներում աշակերտին բարոյական օրէնքների և քաղաքական պարտաւորութիւնների գաղափարներ տալու մասին հարկաւոր է հոգ տանել։ Այն երկրում, ուր ժողովրդի մեծ մասը կեանքի գլխաւորագոյն պայմաններին միատեսակ է նայում, այդ գաղափարները պարզ են, բայց Ֆրանսիայում դժուար է մինչևանգամ մանուկին համոզել, ազդել, որ նա օրինակ յարգէ իւր ծնողներին։ Ի՞նչ կարող ես անել, երբ մի ընտանիքում հայրը հասարակապետական է, մայրը—կեղծաւոր կրօնամոլ, մօրեղբայրը—բօնապարտեան, հօրաքոյրը — արքայի կուսակից, իսկ խոստովանահայրը—ժէզուիտ։ Այդպիսի ընտանիքում որին պիտի յարգէ և ում պիտի լսէ մանուկը։ Իրաւ է, դպրոցը կրթութեան գլխաւոր վայրն է, բայց միակը չէ։ Աշակերտի միտքը և զգացմունքը բացի դաստիարակի ազդեցութենից, շատ անգամ առանց իւր գիտակցութեան ուրիշ բազմաթիւ կողմնակի ազդեցութիւններին ևս ենթարկւում է։ Դաստիարակներին մեծ աշակերտներ կարող են հակառակել մինչևանգամ (օրինակներ եղել են), եթէ Նապոլէոն Գ-ի օրով հրատարակված դասագրքերով ըսկսումեն ասել, թէ Ֆրանսիային երջանիկ անողը միայն կայսերութիւնն է և առանց Նապոլէոնականների փրկութիւն չկայ։ Ուստի դաստիարակը աշակերտի համոզմունքը պիտի չբռնաբարէ և խօսակցութեան մէջ ընդհանուր հարցեր պիտի չզարթեցնէ։ Թէև Մոնչավորժանոյի վերջին տետրում արդէն

հրատարակված էր, բայց տեղեկութիւնների ամբողջութեան համար կրկնումենք, մանաւանդ որ Ֆրանսիայի այս գործը շատ հրահանգիչ է։ 1879 թ. օգոստոսի 9-ի օրէնքը հրամայումէր չորս տարուան ընթացքում Ֆրանսիայի բոլոր նահանգներում ուսուցչական դպրոցներ (մանկավարժանոցներ) բանալ։ 1884 թ. վերջերը այդպիսի արական մանկավարժանոցներ դեռ ևս հինգ նահանգում չէին բացված, բայց այս 1885 թ. դպրոցական տարեշրջանում այդ պակասն ևս կլրացվի։ Մինչև օրէնքի հրատարակվելը 20 իգական մանկավարժանոց կային, բայց այժմ ամեն տեղ կգտնէք, բացի Սավոյայից, Բէլֆորից և Կոնստանտինից (Ալժէրում)։ Այսպէս այս 1885 թ. Ֆրանսիան 90 արական և 87 իգական մանկավարժանոցներ ունենայ. արականներում 5,015 ուսուցիչներ են պատրաստվում, իսկ իգականներում—2,431 ուսուցչուհիներ։ Արական մանկավարժանոցներում պարապումեն 910 դասախօսներ, որոնցից 362 մասնագէտ են և 58 երկրագործութեան ուսուցիչներ, իսկ իգական մանկավարժանոցներում—328 ուսուցիչներ և 194 ուսուցչուհիներ։ Ազգային ուսումնարանների վիճակագրական տեղեկութիւններ միայն 1882 թ. են հրատարակված, որպիսի ուսումնարանների թիւը 75,635-ի է հասնում, ուր 124,965 ուսուցիչներ և ուսուցչուհիներ դասախօսումէին 5,341,211 աշակերտներին և աշակերտուհիներին, բացի մանկանոցներում եղած 644,384 երեխաներից (1883 ին մանկանոցներում 90,940 երեխաներն ևս աւելացան)։ 1877 թ. հոգևորականութեան պահած 13,205 դպրոցներից 1883 թ. միայն 11,165 մնաց իւր

ձեռին, իսկ մնացածները փակվեցան կամ քաղաքական իշխանութեան ձեռն անցան։ Ազգային ուսումնարաններից 570 բարձրագոյն դպրոցներ էին, ուր 30,000 աշակերտներ էին սովորում։ Նորընտիր զինուորներից 13$^0/_0$ կարդալ չգիտէին. պսակվօղ Հարիւր օրիորդից 75 կարող էր ցուցակում իւր անունը ստորագրել։ 1881 թ. Հրատարակված օրէնքը բոլոր ուսուցիչներից ընդունակութեան վկայագիր (brevet de capacité) էր պահանջում։ Այդ պարտքից միայն երկար տարիներ ծառայողները ազատ են մնում։ Այդ օրէնքը սկզբնական ձրի կրթութիւնը ներմուծեց, որը պէտք է հոգայ հասարակութիւնը և այդ պատճառով գնահարկի $^1/_5$ պակասեց։ Ելև-մուտքի Հաշուով սկզբնական դպրոցների 102 միլիոն ծախսից 68 միլիոնն է տալիս։ Այդ դպրոցների ընդհանուր ծախսը, տեսչականն ևս միասին առած, մինչև 132 միլիոնի է հասնում. որից 87$^1/_2$ միլիոն տալիս է գանձարան, 17$^1/_2$ միլիոն նահանգները, իսկ 27 միլիոն—Համայնքները։ Բայց դորանից տէրութիւնը 1878 թ. սկսած ազգային ուսումնարանների շինութեան և ուրիշ ծախսերի համար 368 միլիոն է տուել։

Կ. Մ.

---

## ՆԵՐԿԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԷԼԺԻՔՈՒՄ։

Բէլժիքում սկզբնական դպրոցները դեռ ևս անցեալ տարի ծաղկած դրութեան մէջ էին։ Յունվարին որոշված էր ուսուցչի ամենաքիչ (minimum) վարձ 1200 ֆ., իսկ ուսուցչի օգնականին 1000։

Բացի դորանից Հասարակութիւնը պարտաւոր է ուսուցչին ձրի բնակութիւն կամ բնակութեան վարձը տալ։ Եթէ ուսուցիչը հինգ տարվան ընթացքում կարգապահական տուգանքի չենթարկվի, ռոճիկը 100 ֆրանկով կաւելանայ. եթէ նոյնպէս չարունակվի տասն տարի, ռոճիկն կաւելանայ 200 ֆ., տասն և հինգ տարում—400 ֆ., քսան տարում—600։ Եւ այդ բոլորն այնպիսի հասարակութիւնների մէջ է լինում, որոնք իրանց սակաւութեան պատճառով վերջին կարգին են պատկանում ( մինչև 1000 մարդ )։ Այն հասարակութիւնների մէջ, որոնք 10, 20, 50 հազար բնակիչներից են կազմված, ուսուցչի ամենաքիչ ռոճիկը 1300—3000 ֆրանկի է հասնում ( քսան տարի յետոյ 1900—4000 ֆ.)։ Այդ թուերը այս կարգով են միւս տէրութիւնների ուսուցիչների նախանձը գրգռել։

Ուսուցչուհիները մի փոքր պակաս են ստանում։ Բացի դորանից բարձրագոյն դպրոցներում ուսուցիչների ստացած առաւելութիւն մինչև 300 ֆ. է հասնում, իսկ հասակաւորների հետ պարապողն ամսական 60 ֆ. աւելի կստանայ։ Այդ օրէնքը, չնայելով առատ վարձատրութեան, մանկավարժական աշխարհում դժգոհութիւն ծագեցրեց, որովհետև դորանով քաղաքայի ուսուցիչները աւելի առաւելութիւններ ունէին քան գիւղական ուսուցիչները, որոնց աշխատանքը բացի պակաս չլինելուց դեռ աւելի վարձատրութեան արժանի է։ Շատ քաղաքներում ուսուցիչներն իրանց ժողովներում հակա—ծրագիր (contre projet) կազմեցին, որով ութ աստիճանի փոխարէն ընդունեցին հինգ աստիճան, ջըն-

ջնջին առաւելութիւն և այլն։ Բէլժիքի ազգային ժողովը մայիսին հաստատեց ուսուցիչների արքունական թոշակի օրէնքը, որով 15 տարի ծառայելուց յետոյ, կարելի է արքունական թոշակ ստանալ։ Բայց յունիսին ազգային ժողովի նոր անդամների ընտրութեան ժամանակ կաթօլիկական և յետադիմական կուսակցութիւնն առաւելութիւն ստանալով, իւր առաջին գործն արեց աշխարհական դպրոցների հալածումն, և սկզբնական կրթութիւնը հոգևորականութեան յանձնելու համար իւր բոլոր ջանքը թափեց։ Նոր նախարարութիւնը, որի երեք անդամներն ականյայտնի ժէզուիտներ էին, իւր գործը ազգային լուսաւորութեան նախարարութիւնը ոչնչացնելով սկսեց, որի վարչութիւնը ներքին գործերի նախարարութեան հետ միացրեց։ Յետոյ դպրոցական նոր օրէնք հրատարակվեցաւ, որով սկզբնական դպրոց հիմնելու և նորան հսկելու իրաւունքը համայնութիւնների ձեռից խլելով յանձնվում էր մասնաւոր անձներին և հոգևորական խորհուրդներին։ Պարապմունքի ծրագրում առաջին տեղ բռնեց իհարկէ կրօնի դասախօսութիւնը։ Համարեա տէրութեան բոլոր համայնքները ազգային ժողովից և թագաւորից խնդրեցին, որ առաջ ընդունված և հաստատված օրէնքը անխախտ մնայ։ Բայց իզուր։ Այնուհետև կղերականների շահերին վնասակար ուսուցիչների աքսորումն սկսվեցաւ. մի ամսում մանկավարժանոցների 109 ուսուցիչներ արձակվեցան։ Արական մանկավարժանոցների թիւը վեցով սահմանափակվեցաւ, իսկ իգականները—չորսով։ Բայց ժեզուիտները չկարողացան երկար ժամանակ Բէլժիքին

տիրել։ Հոկտեմբերի ընդհանուր քաղաքային վարչութեան ընտրութիւնները ապացուցին, որ Բէլժիքը կղերականների կառավարութեան տակ մնալ չէ կամենում։ Նախարարութիւնն ստիպվեցաւ հրաժարվել և նոր նախարարները հետզհետէ հին կարգերով են առաջնորդվում, թէպէտ սկզբնական դպրոցների ելևմուտքը դեռ ևս 3½ միլիոնով պակաս է։

---

## Ի Մ Վ Ե Ր Ջ։

Նորից հոգուս մէջ յուզմունք և շփոթներ,
Նորից ծնվումեն սրտում կասկածներ.
Մութ է իմ առաջ ապագայի դար,
Վախեցնումէ կեանքն իբր անյայտ անտառ։
Ինձ թուումէ հեռու նոյն տարակուսանք,
Սպասումեն նոյն վիշտ և նոյն չարչարանք...
Թէ իմ լաւ մտքերս, ձգտումներս բնաւին,
Բարի փափագներս մեռած կորչէին,
Թէ այս անզգայ, սուտ աշխարհ թողած,
Ինձ հետ կտանեմ այնքան վիշտ, կասկած,
Որ նաև այնտեղ իմ հոգիս, աւաղ,
Չի գտնի հանգիստ, չի լինի խաղաղ։

Մայիսի 1. ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ։

---

## ՓՈՐՁԱԿԱՆ ԿԱՄ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ ԿՐՕՆԻՑ ԱՍՏՈՒԾՈՒ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

*(Դպրոցում երեք տարի սովորող 9—10ամեայ աշակերտների համար։ III նախակրթարան)։*

*Ուսուցիչ. Ո՞վ է պատրաստել քեզ համար այն տունը, որի մէջ դու բնակւումես։*

*Աշակերտ. Իմ բնակած տունը պատրաստել է հայրս։*

*Ուս. Ի՞նչից և ի՞նչպէս է շինված ձեր տունը։*

*Աշակ. Մեր տունը շինված է քարերից, գերաններից և տախտակներից։ Քարահատները բերել են քարեր, իսկ որմնադիրը շինել է պատեր։ Հիւսները պատերի մէջ շինել են լուսամուտներ և դուռը, յատակը և առաստաղը, նոյնպէս և տանիքը։ Իսկ վառարանը շինած է վարպետը աղիւսներից։*

*Ուս. Ի՞նչի համար են շինված ձեր տանը լուսամուտներ։*

*Աշ. Լուսամուտները շինված են նորա համար, որ տանը լոյս լինի, առանց լուսամուտների մութ կըլինէր, իսկ մթնում աշխատել չէ կարելի։*

*Ուս. Ի՞նչի համար է շինված վառարանը տան մէջ։*

*Աշ. Երբ ցուրտ է լինում, վառարանում կրակ են վառում սենեակը տաքացնելու, այլև վառարանում կերակուր են եփում։*

*Ուս. Արդ ո՞վ է կարգաւորել տանը ամեն բան այնպէս, որ դու լաւ ես ապրում այնտեղ. և տաք է, և լոյս է, և ամեն կարևոր իրեր կան. կայ մահճակալ, որի վերա դու քնումես, կայ սեղան, որի վերա ճաշումես, կայ նստարան, որի վերա նստումես։*

*Աշ. Այս ամենն ես կարգաւորել է հայրս։*

Ուս. Տանը ամեն բան այնպէս է կարգաւորված, որ դու ամբողջ յարմարութիւններ ունենաս։ Այժմ տեսնենք թէ տնից դուրս գտնված ամեն բանը հարկաւոր է արդեօք և օգտաւէտ է մարդկիներին։ Քաղաքի մէջ կան աղբիւրներ և անցնումէ գետը —հարկաւոր են արդեօք նոքա մեզ։

Աշ. Աղբիւրները և գետը մեզ հարկաւոր են. նոցանից մենք առնումենք ջուր խմելու, կերակուր պատրաստելու, ճերմակեղէն լուանալու համար։ Գետերի ջուրը լողանումեն մէջ ձիերը, կովերը, ոչխարները։

Ուս. Քաղաքից քանի մի վէրստ հեռու կայ անտառ, հարկաւոր է արդեօք նա մեզ։

Աշ. Անտառը հարկաւոր է. նորա ծառերից տուն, ամբարներ շինելու, վառելափայտ կամ ցախ ունենալու, փայտից շինումեն սեղաններ, նստարաններ, աթոռներ, պահարաններ, մահճակալներ, զանազան անօթեղէն, տաշտեր, գաւաթներ, տակառներ, գդալներ...

Ուս. Երկնքում փայլումէ արեգակը,—օգտակար է արդեօք մեզ։

Աշ. Օգտակար է. նա լոյս է տալիս, առանց արեգակի մենք միայն գիշեր կունենայինք, արեգակը տաքացնումէ, իսկ առանց տաքութեան ոչինչ չէր աճի. ոչ խոտ, ոչ ծաղիկներ, ոչ ծառեր։

Ուս. Ուրեմն բոլորն ինչ որ տեսնումենք տնից դուրս նոյնպէս օգտաւէտ է և կարևոր մեզ համար. օգտաւէտ և կարևոր են թէ քարհանքը, թէ անտառը, թէ աղբիւրները, թէ գետը, թէ արեգակը—մի խօսքով ամենայն ինչ։ Բայց դու կհաւատայիր արդեօք,

եթէ մին ոք քեզ ասէր թէ այն տունը, որտեղ դու բնակւումես, ոչոք երբէք շինած չէ, թէ նա կանգնել է ինքն իրան, պատահմամբ, թէ պատերը և առաստաղը, և լուսամուտները և վառարանը և միւս նորանում գտնված ամեն բաները նոյնպէս գոյացել են ինքն ըստինքեան։

Աշ. Ոչ, ես այդ չէի հաւատայ։

Ուս. Բայց կարող էր արդե՞օք մի մարդ շինել կամ ստեղծել թէ այս երկիրը, որի վերա ապրումենք, թէ այս արեգակը, որը լուսաւորումէ և տաքացնումէ, թէ ջուրը, որը խմումենք։

Աշ. Ոչ, մի մարդ չէր կարող այս շինել։

Ուս. Ուրեմն այս բոլորը մի ոք շինել է կամ ստեղծել է։ Ո՞վ է ստեղծել։

Աշ. Այս բոլորը ստեղծել է Աստուած։

Ուս. Դու ճշմարիտ ասացիր։ Թէ երկինք, թէ երկիր, թէ բոլորն ինչ որ նոցա վերա կայ, բոլոր աշխարհը ստեղծել է Աստուած։ Բայց եթէ որ Աստուած է ստեղծել աշխարհը, ուրեմն ո՞վ է առաջագոյն եղել. աշխարհ թէ Աստուած։

Աշ. Առաջ եղել է Աստուած։

Ուս. Արդ եղել է արդեօ՞ք այնպիսի ժամանակ, երբ Աստուած չէ եղել։—Ոչ, այդպիսի ժամանակ չէ եղել. Աստուած միշտ եղել է և միշտ կլինի։ Նա մշտական է։ Հայերէն մշտական բառի տեղ առանձին բառ ունինք գործածելու. յաւիտենական բառը։ Ուրեմն միշտ լինելու համար ի՞նչ պիտի ասենք Աստուծուն։

Աշ. Որովհետև Աստուած միշտ եղել է և միշտ կլինի, սորա համար Աստուծուն ասումենք մշտական

կամ յաւիտենական։

Ուս. Ձեզանից մին կարող է արդե՞օք կարգով ասել բոլորն, ինչ որ խօսեցինք։

Ամենք աշակերտներ բարձրացնումեն ձեռն ի նշան պատմել կարօղանալու։

Ուս. Պետրոսեան, պատմիր ուրեմն։

Աշ. Պետրոսեան. Մեր բնակած տունը պատրաստել է Հայրս քարից, գերաններից, տախտակներից։ Մեր տունն ունի լուսամուտներ լոյսի համար, վառարան—տաքացնելու և կերակուր եփելու համար։ Այս բոլոր յարմարութիւնները շինել է Հայրս։ Մեր քաղաքում կան աղբիւրներ, գետ, որոնց ջուրը մեզ հարկաւոր է զանազան պէտքերի համար, քաղաքից դուրս փոքր ինչ հեռու կայ անտառ—ցախի, շինութիւնների և կահկարասիքների համար։ Կայ արեգակ, որ լուսաւորումէ և տաքացնումէ մեզ։ Այս բոլորը ստեղծել է Աստուած, Որը եղել է աշխարհից առաջ և պիտի լինի միշտ։ Աստուած մըշտական կամ յաւիտենական է։

Ուս. Այժմ ամենքդ լսեցէք ինչ որ ձեզ կասեմ։ Արդէն իմացանք, որ բոլոր աշխարհը ստեղծված է Աստուծուց։ Այժմ ես կարգով կպատմեմ ձեզ Աստուած ինչպէս կարգաւորեց աշխարհը։ Նախ Աստուած ոչնչից ստեղծեց երկինք և երկիր։ Երկիրն անձև և անպատրաստ էր. չկային երկրի շուրջ ոչ արեգակն, ոչ լուսին, ոչ աստղներ։ Չկային երկրի վերա ոչ գետեր, ոչ լճեր, ոչ ծովեր։ Չէին աճում ոչ ծառեր, ոչ թփեր, ոչ խոտ։ Ոչ ոք չէր բնակում երկրի վերա, և երկիրը ծածկված էր խաւարով։ Աստուած կարգաւորեց աշխարհը վեց օրում։ (Այնու-

հետև ուսուցիչն առաջարկումէ հետևեալ հարցերն և պատասխանները ստանումէ զանազան աշակերտներից)։ Սկզբում ինչից ստեղծեց Աստուած երկինք և երկիր։ Ինչպէս էր երկիրը։ Ինչ չկար երկրի շուրջ։ Ինչ չկար երկրի վերա։ Աճումէ՞ր արդեօք մի բան այն ժամանակ երկրի վերա։ Բնակումէ՞ր արդեօք որ և մին այն ժամանակ երկրի վերա։ Ինչով էր ծածկված ամբողջ երկիրը։ Քանի՞ օրում կարգաւորեց Աստուած աշխարհը։

Ուս. Ձեզանից ո՞վ կարող է պատմել կարգով առանց հարցերի այն բոլորն, ինչ որ ես պատմեցի սկզբում։

(Աշակերտները բարձրացնումեն ձեռները)։

Ուս. Պօղոսեան, պատմիր։

Աշակերտ Պօղոսեանը պատմումէ. Նախ Աստուած ոչնչից ստեղծեց երկինք և երկիր, և այլն։

Ուս. Հապա այժմ գրեցէք ամենքդ ձեր գրատախտակների վերա ինչ որ այդէն ամենքդ լսեցիք և ինչ որ Պօղոսեանը կրկին պատմեց։

Աշակերտները գրումեն, որից յետոյ ուսուցիչը մի երկու աշակերտի գրածը կարդումէ և ցոյցանումէ սխալներ կամ բաց թողած խօսքեր։

Սորանով կվերջանայ առաջին դասը։ Երկրորդ դասը նուիրուած է ստեղծագործութեանը։ Աշխարհի ստեղծագործութեան դասը դժուար դասերից մին կարող է լինել, եթէ միայն համառօտաբանութեամբ կբաւականանայ թէ որ օր ինչ ստեղծեց Աստուած։ Բայց աշխարհի ստեղծումն աւանդելիս մանուկներին, իմ կարծիքով, հարկաւոր է նախ պատմել ս. գրքի մանրամասնութիւններով, որքան և

անինչան երեւելին նոքա ոմանց, և ապա չասանդել մանուկներին բոլոր ստեղծագործութիւնը միանգամ, այլ մաս մաս և երկրորդ մասն այն ժամանակ միայն պատմել, երբ մանուկները լաւ սովորած կլինին առաջին մասը։ Առաջին մասն կարող է լինել ա. բ. և գ. օրերի պատմութիւնը, երկրորդ մասն —դ. ե. և զ. օրերի պատմութիւնը։

---

## ԿՐՕՆԻ Գ. ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ։ ԱՍՏՈՒԾՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

Ուս. Դուք գիտէք, որ Աստուած միշտ եղել է, կայ և պիտի լինի միշտ. Աստուած յաւիտենական է։ Այժմ ասա դու, Մասթէոսեան. տեսել ես արդեօք Աստուած և գիտես արդեօք թէ ինչպէս է Աստուած։

Աշ. Ոչ, ոչ տեսած եմ և ոչ գիտեմ թէ Աստուած ինչպէս է։

Ուս. Աստուծուն երբէք ոչ ոք չէ տեսել։ Աստուած անտեսանելի, աներեւոյթ Հոգի է կամ էակ։ Բայց մենք շատ բան կարող ենք իմանալ յաւիտենական, աներեւոյթ Աստուծու մասին նորա գործերից։ Աստուծու ինչ գործ գիտէք։

Աշ. Ես գիտեմ աշխարհի ստեղծումն։

Ուս. Ի՞նչից ստեղծեց Աստուած աշխարհը։

Աշ. Աստուած ստեղծեց աշխարհը ոչնչից։

Ուս. Կարող է արդե՞օք մարդը մի որեւիցէ բան շինել ոչնչից։

Աշ. Ոչ, մարդը չէ կարող։

Ուս. Իսկ Աստուած ամեն բան կարող է, Աստու-

ծու համար անկարելի բան չկայ։ Ուրեմն ի՞նչ անուն կարելի է տալ Աստուծուն այն մասին, որ Նա ամեն ինչ կարող է անել։

Աշ. Ամեն ինչ անել կարողանալու համար Աստուծուն կարելի է ամենակարող ասել։

Ուս. Արդ ի՞նչ իմացար դու Աստուծու մասին։

Աշ. Ես իմացայ, որ Աստուած ամենակարող Հոգի է։

Ուս. Բայց մենք ի՞նչ գիտէինք Նորա մասին դեռ ևս առաջ։

Աշ. Դեռ ևս առաջ մենք գիտէինք, որ Աստուած յաւիտենական, աներևոյթ Հոգի է։

Ուս. Աստուած ի՞նչ ասաց մարդիկներին, երբ նոցա ստեղծեց։

Աշ. Աստուած նոցա ասաց. Իշխեցէք ձկներին, թռչուններին, կենդանիներին, սողուններին և տիրեցէք բոլոր երկրին։

Ուս. Ուրեմն Աստուած մարդիկներին կարգեց բոլոր արարածներին իշխան. բոլոր կենդանիները ստեղծված են մարդիկների օգտի և բարեբաղդութեան համար։ Ուրեմն ի՞նչ անուն պիտի տանք Աստուծուն այսպիսի բարերարութիւնների համար։

Աշ. Աստուծուն բարի անուն պիտի տանք։

Ուս. Բացի Աստուծուց կարող է արդե՞օք ուրիշ ոք մին Նորանից աւելի կամ Նորա չափ բարութիւն անել մեզ։

Աշ. Ուրիշ ոչ ոք չէ կարող Նորանից աւելի բարութիւն անել։

Ուս. Արդ ի՞նչ կարելի է ասել Աստուծուն այն մասին, որ Նա արել է և անդադար անումէ ամեն մարդիկներին այնքան բարութիւն, որքան ոչ ոք

չէ կարօղ անել։

Աշ. Նորա մասին կարելի է ասել, որ՝ նա վերին աստիճանի բարի է։

Ուս. Նորան կարելի է ասել ամենաբարի։ Ի՞նչ գիտենք այժմ Աստուծու մասին։

Աշ. Մենք գիտենք, որ Աստուած յաւիտենական, աներեւոյթ, ամենակարօղ եւ ամենաբարի Հոգի է։

Ուս. Մեզ ապրելու համար ի՞նչ է անհրաժեշտ։

Աշ. Մեզ անհրաժեշտ կարեւոր են. ուտել, խմել, տուն, հագուստ։

Ուս. Մեզ հարկաւոր է կերակուր։ Աստուած ի՞նչ է ստեղծել մեզ կերակրվելու համար։

Աշ. Մեզ կերակրվելու համար Աստուած ստեղծել է հացի բոյսեր եւ ծառերի պտուղներ։

Ուս. Մեզ հարկաւոր է ըմպելիք։ Աստուած ի՞նչ է ստեղծել մեր խմելու համար։

Աշ. Մեր խմելու համար Աստուած ստեղծել է ջուր։

Ուս. Մեզ պէտքէ տուն։ Աստուած ի՞նչ է ստեղծել սորա համար։

Աշ. Տուն շինելու համար Աստուած ստեղծել է քար, փայտ եւ աւազ։

Ուս. Մեզ պէտքէ հագուստ։ Աստուած ի՞նչ է ստեղծել հագուստի համար։

Աշ. Աստուած ստեղծել է վուշ, որից շինումեն կտաւ եւ կենդանիներ, որոնց բրդից շինումեն մահուդ եւ ուրիշ զգեստներ։

Ուս. Աստուած այնպէս իմաստնաբար կարգաւորել է աշխարհը, որ մենք գտնումենք նորա մէջ ամեն բան, ինչ որ օգտաւէտ է եւ կարեւոր մեզ համար։ Ուրեմն ի՞նչ ասենք Աստուծուն բոլոր աշխար-

հի այսպիսի իմաստուն կարգադրութեան համար։

Աշ. Սորա համար Աստուծուն պիտի ասենք ամենիմաստ։

Ուս. Ուրեմն Աստուած ամենիմաստ Հոգի է։ Արդ ի՞նչ գիտենք այժմ Աստուծու մասին։

Աշ. Աստուծու մասին այժմ գիտենք, որ Աստուած յաւիտենական, աներեւոյթ, ամենակարող, ամենաբարի եւ ամենիմաստ Հոգի է։

Ուս. Ի՞նչի ենք ասում Աստուծուն յաւիտենական, աներեւոյթ, ամենակարող, ամենաբարի, ամենիմաստ։ ....

(Այժմ աշակերտներն արդէն կրանք պիտի բացատրեն Աստուածային յատկութիւնների կանոնաւոր որոշումն)։

Ուս. Ի՞նչ կպատահէր ձեր տան հետ, եթէ հայրդ դադարէր նորա մասին ամենայն հոգացողութիւն անելուց, եթէ չնորոգէր նորան։

Աշ. Մեր տունը կքանդվէր։

Ուս. Իսկ աշխարհը կարող էր արդեօ՞ք գոյութիւն ունենալ, եթէ Աստուած դադարէր նորան խնամելուց։ Կարող էին արդեօ՞ք մարդիկ ապրել, եթէ Աստուած չհոգար նոցա մասին, չաճեցնէր հացը եւ մարդիկ չունենային ոչինչ ուտելու։ Կարող էին միթէ լինել որեւիցէ կենդանիներ, եթէ Աստուած չկերակրէր նոցա։

Աշ. Ոչ. չէին կարող ապրել ոչ մարդիկ, ոչ կենդանիներ։

Ուս. Ամեն մարդիկ, ուր որ լինէին, ամեն կենդանիներ, ուր որ ապրէին, Աստուծու ամենայն արարածը, ուր որ լինէր,—ամենքը պէտք ունին Աս-

տուծու օգնութեամբ։ Աստուած միևնոյն ժամանակ ամէն տեղ օգնումէ ամենքին։ Ուրեմն կայ արդե՞օք այնպիսի տեղ, որտեղ Աստուած չլինէր։

Աշ. Ոչ, Նա ամէն տեղ է գտնվում։

Ուս. Ուրեմն որովհետև Աստուած ամէն տեղ գըտնվող է, այս մասին Նորան կարելի է ասել ամէնուրեք այսինքն ամէն տեղ եղող։ Ասա. ինչ գիտես այժմ Աստուծու մասին։

Աշ. Այժմ Աստուծու մասին գիտեմ, որ Նա յաւիտենական, աներևոյթ, ամենակարող, ամենաբարի, ամենիմաստ և ամենուրեք Հոգի է։

Ուս. Ե՞րբ ստեղծեց Աստուած մարդիկներին։

Աշ. Աստուած ստեղծեց մարդիկներին, երբ պատրաստված էր ամենայն կարևոր բանը Նոցա կեանքի համար։

Ուս. Ուրեմն Աստուած առաջուց գիտէր թէ ինչ հարկաւոր կլինի մարդիկներին, բայց մարդիկներից ոք մին կարող է արդեօ՞ք ապագան իմանալ։

Աշ. Ոչ ոք չէ կարող ապագան իմանալ։

Ուս. Մարդիկներից ոք մին գիտէ արդեօ՞ք թէ ինչ կպատահի մեզ օրինակ երկու տարուց յետոյ։

Աշ. Ոչ, այդ ոչ ոք չգիտէ։

Ուս. Գիտէ արդեօ՞ք ոք մին, ինչ որ մենք մտածումենք։

Աշ. Ոչ, ոչ ոք չգիտէ ինչ որ մենք մտածումենք։

Ուս. Իսկ ամենիմաստ և ամենակարող Աստուած, Որի համար ամէն բան հնարաւոր է, գիտէ արդեօ՞ք այս ամենը։

Աշ. Այո գիտէ։

Ուս. Աստուած ամենայն ինչ գիտէ։ Նա գիտէ ոչ

միայն մեր ամեն գործերը, ինչ որ արել ենք, այլ և այն, ինչ որ չենք արել, բայց անելու ենք երբ և իցէ։ Աստուած գիտէ մեր բոլոր մտքերը և ցանկութիւնները, թէ լաւը և թէ վատը։ Ուրեմն ինչ անուն պիտի տանք Աստուծուն այն մասին, որ Նա ամեն բան իմանումէ, ամեն բան գիտէ։

Աշ. Ամենայն ինչ գիտենալու համար մենք Աստուծուն կասենք ամենագէտ։

Ուս. Ի՞նչ գիտենք այժմ Աստուծու մասին։

Աշ. Աստուծու մասին մենք այժմ գիտենք, որ Նա յաւիտենական, աներևոյթ, ամենակարող, ամենաբարի, ամենիմաստ, ամենուրեք և ամենագէտ Հոգի է։

Ուս. Աստուած ինչի համար է կոչվում ամենուրեք և ամենագէտ։

(Աշակերտներ պարզ և հասկանալի որոշմունք պիտի տան)։

(Այս դասը կարդաց Խ. Ծ. Վ. Ս. Ճմեռն Ախալցխայի դպրոցների մանկավարժական ժողովում)։

---

## ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԵՒ ՀԱՅ ԿՂՆՐ։

(Անսուտ Ճշմարտութիւն համարելով Արևելքի յետագայ մտքերը նոյն ինքն ռուսաբնակ Հայերիս վերաբերմամբ, խորին համակրութեամբ առաջարկումենք այս յօդուածը մեր ընթերցողների և մանաւանդ հայազն հոգևոր հայրերի խորին ուշադրութեանը)։ Խմբ.

«Երկու երողութիւններ կամ երևոյթներ, զորս ար-

Ձանագրեցինք անցեալ շաբթու մէջ, առիթ կու-
տան մեզ ուշադրութիւն հրաւիրելու Հայ կղերի վի-
ճակի վրայ։ Այդ երևոյթներու առաջինն է դոկտ. Սըմըրվիլ անուն սկովտացի ծերունի քարոզչին ատենաբանական պաշտօն, որ այժմ վերջացած է Կ. Պոլսոյ մէջ, և երկրորդն է Մօնիթէօր տը Ռօմ լրագրին մէկ կարևոր հրատարակութիւնն ի մասին այն յառաջդիմութեանց, զորս կաթոլիկութիւնը կընէ եղեր լուսաւորչական Հայերի մէջ։

«Մեր ընթերցողք լսած են արդէն թէ ինչ մարդ է և ինչ պաշտօն կկատարէ դոկտ. Սըմըրվիլ։ Սկովտիոյ Գլասկօ քաղաքին մէջ 40 տարի քարոզչական ու հովուական պաշտօն վարելով, իր նիւթական վիճակն ապահոված, և իր կենաց մնացեալ մասն աշխարհի չորս կողմը Ս. Աւետարանի և Քրիստոնէութեան քարոզութեամբ ու ջատագովութեամբ անցունել որոշած է։ Մէկէ մը թոշակ չստանար, և նիւթական ոʼ և է ակնկալութիւն չունի անձնուիրական այս քրիստոնէավայել ձեռնարկութեան մէջ։ Դոկտ. Սըմըրվիլ անգլերէն միայն կքարոզէ։ Աստ մինչ կքարոզէր, իր խօսքեր կթարգմանուէին բնիկ լեզուներու։ Սկովտացի քարոզիչը մի քանի անգամ խօսեցաւ նաև Հայոց։ Արդ, դիտեցինք թէ ոչ միայն բողոքական, այլ նաև լուսաւորչական Հայեր ախորժով մտիկ ըրին անոր ատենաբանութիւնները։ Դոկտ. Սըմըրվիլ երբեք բողոքական չէր քարոզեր։ Քրիստոնէայք համաձայնութեան կէտեր շատ աւելի ունին քան տարաձայնութեան կէտեր։ Ուստի, դոկտ. Սըմըրվիլ կարող կըլնէր իր ատենաբանութեանց նիւթերն ընտրել Քրիս-

տոնչութեան ընդարձակագոյն և բարձրագոյն մասէն յօրում համամիտ են ամէն Քրիստոնեայք։ Հետեւապէս, բազմաթիւ Լուսաւորչականներ և պատուաւոր ու բանգէտ ազգայիններ, կրցած են ունկնդրել Սկովտացւոյն ոգելից և ազդու ատենաբանութեանց, առանց բնաւ վիրաւորուելու իրենց կրօնային և ազգային զգացմանց մէջ։ Պարահանդէսի մը սրահը լցնելու չափ ստուարաթիւ Հայ ունկնդիրներ փութացած են ներկայ գտնուիլ նաև գօլտ. Սըմըրվիլի ատենաբանութեանց։

«Արդ. գօլտ. Սըմըրվիլի քարոզներուն գտած ընդունելութիւնը կյիշեցնէ մեզ սա տխուր որչափ ակներև իրողութիւն թէ քարոզելու կարողութիւնն աչքի զարնելու կերպիւ պակաս է մեր կղերի մէջ։ Այն-էջ ընթերցողներ գտնելու համար պէտք չունի ազգային սնապարծութիւնը շոյելու։ Օտարազգի քարոզչի մը գովեստ տուած ատեն դառնալ քննադատել ազգային քարոզիչներ, որոնց մոլեռանդից կրնայ թուիլ վնասակար գործ մը։ Բայց այդպիսի կարճատեսութեան և խաւարամտութեան ժամանակները յուսանք թէ անցած են, մեր ժողովրդեան զոնէ քիչ շատ բան հասկցող մասին համար։ Ազգային վիճակի բարւոքում չենք կրնար ակնկալել ոչ մէկ ուղղութեամբ, եթէ շարունակենք գեղեցիկ պարբերութեանց ներքև սքօղել մեր բուն վէրքեր։ Ունինք խորուն վէրքեր, և անոնց մէջ ոչ յետինն է, ոչ ալ նուազագոյն վնաս արտադրողն է Հայ կղերին ամենամեծ մասին իւր բարձր կոչման չհամապատասխանող վիճակի մը մէջ գտնուիլն։ Ամեն ժամանակ, բայց մանաւանդ Մեծ Պահոց միջոցին,

ամեն բանիմաց Հայու սիրտը ծակելու չափ ուշադրութիւն կգրաւէ սա իրողութիւն թէ [illegible] մեր եկեղեցեաց մէջ։ Կընդունինք թէ մասամբ վրա Համբուած մի քանի եպիսկոպոսներ ունեցած ենք, որք գիտցած են Քրիստոնէութեան և բարոյականի վսեմ սկզբանց վրա ժողովրդեան սրտին խօսիլ, և որոց քարոզները մայրաքաղաքիս ազգայնոց Համար մէկ մէկ մեծ դէպքեր եղած են։ Բայց սովորական վիճակի մէջ, և մեր եկեղեցեաց մեծագոյն մասին մէջ, քարոզիչներու սակաւութիւնն ամենացուրտ տպաւորութեամբ մը կհամակէ զմեզ։ Կիրակի և տօն օրեր լսուած քարոզներու ամենամեծ մասին մէջ ոչ սիրտ կայ, ոչ իմաստ, ոչ ալ արուեստ։ Սիրտ չկայ. ժողովուրդը չազդուիր, և մեր Հոգևոր Հարց խօսքերը բնաւ տպաւորութիւն չեն ունենար ժողովրդային բարուց վրա։ Չենք կարծեր սակայն որ այս դիտողութիւնն ընել կարելի լինէր դոկա. Սըմբըվիլի այս քարոզիչներու սովորական ունկնդրաց Համար։ Մեք դիտեցինք թէ դոկա. Սըմբըվիլի ատենաբանութիւնք ինչ տպաւորութիւն կընէին ամենէն աւելի աշխարհասէր և ամենէն աւելի ազատամիտ Համարուած լուսաւորչական ազգայիններու վրա իսկ, և կհետևցնենք թէ կարելի չէ որ այսպիսի քարոզչի մը սովորական ունկնդրաց բարք ու վարքին վրա զգալի տպաւորութիւն մը չընեն այնչափ կենդանի, այնչափ սրտառուչ, այնչափ Համոզիչ քարոզութիւնք։ Դժբախտաբար, ոչ միայն զգացման կողմէ չորութիւն, այլ նաև իմաստի կողմէ աղքատութիւն կնշմարուի մեր Հոգևոր Հարց քարոզութեանց մեծագոյն մասին մէջ։ Եւ

բնական է որ այնպէս լինի։ Մեր քարոզիչ վարդապետք և եպիսկոպոսք ամենամեծ մասամբ հետամուտ չեն կարդալու, հմտանալու և քարոզելու համար նոր տեսակէտներ, նոր գաղափարներ գտնելու։ Անոնք շատ աւելի տրամադիր են օրաթերթեր կարդալու, ազգային—քաղաքականութեամբ զբաղելու, և ժողովական ու կուսակցական գործերով ու հաշիւներով պարապելու, քան իրենց միտքը սնուցանելու Ս. Գրոց և Նախնի Ս. Հարց հոգեշունչ գրուածներով և ընդհանրապէս կրօնային ու բարոյական ուսումնասիրութեամբք։ Երբ վարդապետի վեղարն առած են, կկարծեն թէ ամեն ինչ լրացեալ է, թէ այլ ևս ոչինչ սովրելու և մտածելու պէտք ունին, ժողովրդեան բարոյական ու կրօնական դաստիարակութիւնը կազմելու համար։ Ի՞նչ կարելի է ուրեմն ակնկալել անոնց քարոզութիւններէն.—միշտ միևնոյն հաստատատիպ խօսքերը դժոխոց կրակներուն և երկնից արքայութեան վրայ։ Եթէ երբեմն դուրս ելնեն այս նեղ շրջանակէ, այն ալ անձնականութեանց եւ օրուան խնդրոց մէջ մտնելու համար է, Եկեղեցւոյ բեմը փոխադրելով Ազգ. Ժողովոյ և Կրօնական ժողովոյ ընթացիկ վէճերը։ Պէ՞տք է միթէ զարմանալ որ տարուէ տարի կպակսին եկեղեցի յաճախողները։ Ժողովուրդը կիրթուի, նոր սերունդը կզարգանայ, և չի կրնար գոհանալ այն հասարակ խօսքերով, որովք կշատանային մեր հարք։ Հարկ է նոր ոգի մը, նոր իմաստներ, նոր հօրիզոններ, նոր տեսակէտներ, քրիստոնէութեան և բարոյականի վսեմագոյն սկզբանց բացատրութեան մէջ։ Դրէք զատոնք մեր եկեղեցեաց մէջ, և ապա-

հով են եթէ անոնք վերստին պիտի լցուին հաւատացելոց և մինչև իսկ անտարբերներու հոծ բազմութեամբ, որք պիտի գան ոչ միայն աղօթելու, այլ նաև բան սորվելու, իրենց սիրտն ու միտքը միանգամայն կրթելու։ Եթէ ասոր համոզուելու համար փաստի պէտք կայ, յուսանք թէ դօկտ. Սըմըրվիլի քարոզչական փայլուն պտոյտն ընձեռած է զայդ փաստ։

«Մեր եկեղեցեաց մէջ լսուած քարոզներուն մեծագոյն մասն ոչ միայն զգացումէ և իմաստէ, այլ նաև արուեստէ զուրկ է, ըսինք։ Բայց արուեստ ըսելով արուեստականութիւն չհասկացուի։ Արուեստականութիւնն անյաջող քարոզիչներու արուեստն է։ Եթէ կայ դաստիարակի արուեստ մը, եթէ կայ հրապարակագրի արուեստ մը, եթէ կայ փաստաբանի արուեստ մը, կայ նաև քարոզչի արուեստ մը. զի քարոզիչն է միանգամայն դաստիարակ մը, հրապարակախօս մը, և փաստաբան մը։ Կաթոլիկ և բողոքական եկեղեցեաց պաշտօնեայք իբրև արուեստ կսորվին և կմշակեն քարոզչութիւնն։ Այս է գլխաւոր գաղտնիք մը անոնց աշխարհածանօթ յաջողութեան։

«Ազգային մեծ պէտք մ՚է արդ հոգ տանիլ որ մեր վարդապետաց և եպիսկոպոսաց մէջէն հասնին հմուտ և պերճախօս քարոզիչներ, կրօնային և բարոյական առողջ կրթութիւն մը տալու մեր ժողովրդեան, և կրօնային անտարբերութիւնն հալածելու մեր նոր սերնդեան մէջէն։ Հայ կղերն ամեն ինչ արտաքին աշխարհէն պէտք չէ ակնկալէ։ Ինքնօգնութիւնն Հայ կղերին մեծագոյն միջոցն է իւր ինչ

ինչ ախներու պակասները լրացնելու և ինքզինք ժամանա՛կէս պէտքերուն տալու յարմար հանդիսացնելու համար։ Չենք կարծեր որ կարևոր ձեռնարկ մը կարենայ ըլլալ Հայ կղերին բարձրագոյն կրթութիւն մը տալու համար, երբ դժբախտաբար անլուծ կմնայ մեր նոր սերնդոց իսկ բարձրագոյն կրթութեան խնդիրը։ Բայց իրարու օգնելով, եւ կեցող վանական և այլ հաստատութիւնները կարգի դնելով, Հայ կղերը տակաւին շատ բաներ կրնայ ընել։ Ամէն պարագայի մէջ, պէտք չէ մոռանալ թէ աններելի և անհանդուրժելի թերութիւն մ'է որ Հայ ժողովրդեան պէս կրօնական և կրօնասէր հասարակութեան մը մէջ Դիոգինէսի լապտերով հարկ է փնտռել քիչ շատ հմուտ և խօսիլ գիտցող քարոզիչներ։

«Մօնիթէօր տը Ռօմին նկարագրութիւնն ի մասին կաթոլիկութեան յառաջդիմութեան ի Հայս յոյժ չափազանցեալ է անշուշտ։ Բայց հետազնին միտք մը անտես չի առնուր երևոյթներն այն միակ պատճառաւ թէ չափազանցեալ է անոնց նկարագրութիւնը։ Կաթոլիկ թերթին յօդուածագիրը ցոյց տուած էր երկու պատճառներ, որք ամէն պարագայի մէջ առաւել կամ նուազ նպաստամատոյց են կաթոլիկութեան ծաւալման։ Մին այն է թէ կաթոլիկութիւն ծաւալող պաշտօնեայք Հայու կերպարանքով կտեսնեն մեր մէջ և ոչ լատին—Եւրոպացւոյ կերպարանքով և լատին եկեղեցւոյ ծէսերով, որպէս յառաջագոյն։ Հայը գիտէ Հայուն տկար կողմերն, և դիւրաւ կրնայ օգուտ քաղել անոնցմէ։ Կտեսնենք ուրեմն որ այն վայրեր, զորս Կեդրոնական Վար-

չութիւնն և Կիլիկիոյ Կաթողիկոսն անհովիւ կթողուն, յարմարագոյն կռուան մը կընծայեն կաթոլիկութեան արմատ գտնելուն քան այն վայրեր, ուր ազգային—եկեղեցական իշխանութիւնք առաւել արթուն են։ Երկրորդ պատճառ մը որ միամիտ ազգայիններ Հայ Եկեղեցիէն հեռացնելու կրնայ նպաստել ըստ յօղուածագրին կարգապահութեան ոգւոյն կատարեալ բացակայութիւնն է, որ կդիտուի մանաւանդ Հայ կղերին մէջ։ Կաթոլիկ և բողոքական միսիոնարք կգործեն զինուորական կարգապահութեամբ և անձնուիրութեամբ։ Ոչ մէկ վտանգ, ոչ մէկ յոգնութիւն կկասեցնէ նոցա եռանդը։ Բանակ մը, որ կուզէ ապահով մնալ, պարտի քաջ գնահատել իւր հակառակորդին զօրաւոր կողմերն։ Արդ, բողոքական և կաթոլիկ միսիոնարութեանց ամենէն զօրաւոր կողմն են այս կարգապահութիւն և այս անձնուիրութիւն։ Բայց Հայ կղերին արդի կացութիւնն այնպէս է, որ ոչ մէկը կարող է հրամայել միւսին։—Գուցէ վտանգ մը կայ կէտի մը վրա։ Աչալուրջ դէտեր կպակասին մեր կղերի մէջ։ Բայց եթէ գտնուին իսկ, ոլի՞ն խօսքովն ո՞ր եկեղեցականը կթողու իւր գտնուած տեղն և վտանգի վայրը կը վազէ։ Արդի Կրօնական Ժողովոյ օրով, որ տեսակին մէջ զօրաւոր մարմին մը լինելու համբաւը կվայելէ, քանի եկեղեցականներ կըցան ղրկուիլ Տաճկա-Հայաստանի, Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ ամենէն կարօտ և անխնամ հայաբնակ վայրերն։ Երբ խնդիր է գաւառներն երթալ իբրև առաջնորդ, կամ առաջնորդական փոխանորդ կամ տեղապահ, մեր եկեղեցական հարք ամեն բանէ առաջ կհաշուեն

իրենց ապրուստի միջոցներն. առևտրական ամենախիստ ոգւով կբանակցին իրենց անձնական և ընտանեկան հանգստեան պայմանաց վրայ, և ամենամեծ մասամբ չեն կրնար համաձայնիլ, և կմնան ուր որ առաւել հանգիստ են։ Խորին վշտով կյայտարարենք զայս, բայց միթէ այնպէս չէ՞։ Միթէ գաւառային պաշտօններու մասին, աշխարհային հանգստեան միջոցներն հոգւոց փրկութեան և հասարակութեան օգտին նկատումներէն աւելի բարձր տեղ մը չե՞ն բռներ մեր եկեղեցական հարց մտքին մէջ։ Շատ անգամներ լսուած է միթէ որ հայ եկեղեցական մը լոկ անձնուիրութեամբ, անձնազոհութեամբ, միայն գաղափարի մը սիրոյն համար, կամ պարզապէս իւր կրօնային և ազգային հաւատքէն մղեալ յանձն առած լինի գաւառային պաշտօն։ Ամենէն աւելի մեր մէջ պէտք կայ անձնուէր կղերի մը, և ամենէն աւելի մեր մէջ զգալի է այդպիսի կղերի մը բացակայութիւնը։ Մենք զարմանալով կկարդանք փարիզցի, բորդոցի, լիլցի ազնուազարմ և հարուստ Փրանսացի երիտասարդաց պատմութիւններ, որք թողլով ամեն աշխարհային բարեկեցութիւն, իրենց կեանքը կնուիրեն Քրիստոնէութիւն ծաւալելու հեթանոսներու և վայրենիներու մէջ։ Զարմանալով կտեսնենք անգլիացի և ամերիկացի մեծատանց զաւակներ, որք միսիոնարական գործին կնուիրեն իրենց անձն և իրենց աշխարհային գանձը։ Զարմանալով կտեսնենք Սըմըրվիլ մը, որ փոխանակ իւր դիզած հարստութեամբ հանգիստ կեանք մը վարելու Սկովտիոյ գեղեցիկ Հայլանտներուն մէջ, աշխարհի չորս կող-

մը, կիսավայրենի ժողովրդոց մէջ իսկ կորչի Աւետարան քարոզելու համար։ Կրօնային անձնուիրութեան այսպիսի վսեմ օրինակներ կան միթէ մեր կղերի մէջ։ Չենք խօսիր Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմական այն վաղեմի կղերին վրայ, որում այնչափ բան պարտական ենք մեք, տասնեւիններորդ դարու Հայերս։ Միթէ արդի ժամանակիս մէջ նուազ պէտք կայ կղերային անձնուիրութեան Եկեղեցին փրկելու համար այնպիսի վտանգներէ, որք եթէ անցելոյն վտանգաց չափ բուռն չեն, անուամենայնիւ կարօղ են առաւել աղետաբեր հետեւանքներ ունենալ, սպաննելով այն կրօնային ոգին, զոր անցելոյն բարբարոսական հալածանքներն ընդհակառակն եւս քան զեւս արծարծելու միայն կծառայէին»։

---

## ԿԱՐԻՆԻ (ԷՐԶՐՈՒՄԻ) ՀԱՅԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ։

Կարին երկու տարի առաջ Հասարակաց մտադրութիւնը գրաւած էր յանկարծական դիպուածոյ մը պատճառաւ, յորում իշխանութիւն եւ արդարութիւն ու գթութիւն նշանաւոր դերեր կատարեցին. այլ գթութիւնն գերազանցեց, մեր Օգոստափառ Վեհապետին գթութիւնը, որ փառաւորեց իւր անունը, մխիթարեց իւր ժողովուրդը, եւ այդ եղաւ նախընթաց տարւոյն որոշիչ եւ ճշգրտիչ կէտն։

Երբ 1884 տարին կմտնէր, գլխաւոր էր Կարին, իւր զաւակներէն երեսուն ինն դժպհի դատապար-

տութեան ներքոյ էին, նոցա եղկելի ընտանիք ան-
մխիթար և կարօտ, վիճակին առաջնորդն բացա-
կայ և ազգային ժողովականք ու գլխաւորք միմի-
այն այդ ցաւոց դարմանովն զբաւեալ: Հազիւ թէ
տարին կիսեցաւ և ահա ակնկալութիւնք պա-
կուեցան, և երբ նոր տարին կմտնէր, Կարին այն-
չափ ինչ փոփոխեալ էր, որ կարող էր իւր կացութեան
վրա ուշադրութիւն դարձնել: Այնչափն իսկ բաւա-
կան է որ 1884 տարւոյ յիշատակը քաղցր ու հա-
ճոյական մնաց Կարնեցւոյն սրտին մէջ, թէպէտ և
մերձ ի վերջ տարւոյն ցաւոց ենթարկուեցաւ, զի
բոլոր Ազգին հետ կորուս այն Պատրիարքը որ գըլ-
խաւոր մաս մը ունեցած էր իւր կացութեան բա-
րեփոխման մէջ. այլ ոչ վարդ առանց փշոց:

Երբ կըսեմք թէ նոր տարւոյն սկիզբը Կարին կա-
րող կըլնէր իւր կացութեան վրա խորհիլ, երբէք
ընդարձակ իմաստով չեմք խօսիր: Ոչ միայն Կա-
րին զգալապէս կլլէ տակաւին իւր արկածից տպա-
ւորութիւնները, այլև կկրէ տնտեսական վիճակի
ձախող հետևանքները, որով առ այժմ ինչ որ Կար-
նոյ վրա կընայ գրուիլ, կամ ինչ որ իրապէս Կար-
նոյ հասարակութենէն կընայ սպասուիլ, անհամե-
մատ ստորին է այն մեծ համբաւն, զոր վայելեց
միշտ Կարնոյ քաղաքը և զոր կվայելէ տակաւին
հեռաւորաց մտքերուն մէջ:

Կարնոյ հայ հասարակութեան պակսած է միշտ
միապաղաղ միութիւն մը, և այս բնական հետե-
ւանք է այն մեծ գաղթականութեան, որ տեղի ու-
նեցաւ 1830-ին, և երբ 4000 տուն հաշուած ժողո-
վրդէն հազիւ երկու տասնեակ տուներ մնացին

անշարժք։ Մնացորդ 20 տունը այժմ 2000 եղած է և այդ թիւը կազմուած է մաս մը գաղթականութենէ յետս դարձողներէն, որք քանի մը տարի հետաւորութեամբ կորուսած էին նախկին հոգին և նոր զգացում և ունակութիւն ստացած, մաս մը մերձակայ գիւղերու բնակիչներէն, որք նոր տարր մը կկազմեն նաև իրենց մէջ տարբերեալ և մաս մ՚ալ այդ կողմերու ուրիշ քաղաքներէն հաւաքուած, որք իրենց հայրենեաց յիշատակութիւնը կպահեն իբր բաժանմանց նշան և իբր յարաբերութեանց խարոց։

Որովհետև 50 տարուան միջոցի խօսք մ՚է այս, անոր համար տակաւին այդ բաժանմունք զօրաւոր են, իբր զի այժմեան տուներու գլխաւորք, կամ առ առաւելն անոնց հայրերն բնիկ Կարնեցի չեն։

Ժողովուրդ կամ քաղաք կամ հասարակութիւն կոչուած բանը, աւանդաբար մէկտեղ եղած և յորդւոց յորդիս մէկտեղ ծնած ու սնած անձանց միութիւն է. հաւաքածոյ ժողովրդեան մէջ բաժանմունք և տարբերութիւնք կտեւեն, և ամէն բանի մէջ ազդեցութիւն կգործեն։ Կարնոյ ազգային խնդրոց և գործոց, վիճից և գժտութեանց, բարեկամութեանց և թշնամութեանց արմատն և խոկութիւնն թափանցել ուզողներ այդ տարբերութեանց ոյժն կտեսնեն յայտնապէս։ Այդ է թերևս և պատճառն որ գաղթականութեան թուականէն մինչև այժմ ներքին անհամաձայնութիւններ անպակաս եղած են ի Կարին. այլ որովհետև Կարին համեմատաբար լաւ տնտեսական վիճակ մը վայելած է, կարողացած է ևս դեղեցիկ արդիւնքներ ցուցնել

մերթ ընդ մերթ։

Կարնոյ ազգաբնակութեան վրայ այդ ընդհանուր հայեացքը նետելէ յետոյ, մասնաւոր կէտերուն անցնինք։

Ժողովուրդ. Որչափ և հասարակաց ու տարբերութիւններով բաժանեալ, տակաւին Կարնեցին երկու լաւ պայմաններու ներքև գտնուելով, լաւ ալ հետևանքներ ունեցած է։ Առաջին պայմանն է ընդարձակ և առաջնակարգ կուսակալութեան կեդրոն ըլլալն, որով բարձրագոյն դիրք ունենալու մղուած և սովորած է. և երկրորդ պայման է միակ եկեղեցւով միակ թաղ մնացած ըլլալը, որով ներքին պառա՛կտմանց դուռ չէ բացուած։ Ժողովրդական միջոցներու միութիւնը և նոյն միջոցներու բարգաւաճումը այդ պայմաններուն հետևութիւններն են։ Միւս կողմէն անցեալ արկածներէն մնացած ցնցումը կտիրէ տակաւին, անտեսական և առևտրական վիճակին անկումը կլքուցանէ սաստիկ, որով չկրնար լաւ արդիւնաւորել իր այժմեան հանգարտութեան գեղեցիկ առիթը։ Քաղաքիս ժողովրդեան վիճակը կրնայ ուրեմն երկու խօսքով բացատրուիլ. խաղաղ և ղանդաղ։

Վարչութիւն. Գաւառական Վարչութեան Կրօնական և Քաղաքական ժողովները սահմանադրաբար ընտրուած են 1884 տարւոյն մէջ։ Կրօնական ժողովն քաղաքի և գիւղօրէից ընտրելագոյն քահանաներով կազմուած է։ Քաղաքական ժողովէն հեռի են այն ազդեցիկ գերդաստաններու անդամք, որք սովորաբար Վարչութիւնը ձեռուընին ունեցած են, և որք վերջին արկածներէն յետոյ խոհական հե-

ուսուցութիւն մը պահել սիրած են։ Ներկայ Վարչութիւնն մեծաւ մասամբ նորերէ կազմուած է, սակայն մի կողմանէ անդամոց բարեսէր զգացմամբ, և միւս կողմանէ սահմանադրական իրաւանց կիրառութեան ոչ ուղղակի և ոչ անուղղակի խափանարաններ չունենալով, արդիւնաւոր պաշտօնավարութիւն ունի և պիտի ունենայ առանց դժուարութեան։

Խորհուրդք. Վարչութիւնն երկու օժանդակ խորհուրդներ կազմած ունի. Դաստիարակական և Տընտեսական։ Ուսումնական խորհուրդը կազմուած չէ, վասն զի քաղաքս միակ թաղ լինելով և բոլոր վարժարանք միակ Թաղական խորհուրդէ կախում ունենալով, ամէն ատեն Թաղականի եւ ուսումնականի իրաւասութեանց շփոթութիւններ յարուցած են. որով եւ վարժարաններն սովորապէս միոյն ենթարկել հարկ դարձած է։ Երբեմն Հոգաբարձութիւնը ուսումնական խորհրդոյն տրուած է, եւ երբեմն ուսումնական խորհրդականութիւնը Հոգաբարձութեան։ Այսօր բոլորովին Թաղական խորհրդոյ ձեռքը յանձնուած են վարժարանները։ Իսկ գիւղական վարժարանաց գործերը եւ արտասովոր խնդիրները Վարչութիւնն ինքնին կհոգայ։

Թաղական։ Կարնոյ քաղաքին միակ Թաղական խորհուրդը, թէպէտ մէկ երկու հրաժարականներով նուազեալ, սակայն մեծամասնութիւնը պահելովն եւ մնացեալ անդամոց կրկին փութով աշխատելովն, օրինաւոր եւ կատարեալ պաշտօնավարութիւն մը ունի։

Կալուած. Կարին կալուածոց կողմանէ բարեբաղ-

դաւոյն քաղաքներէն մին է։ Եկեղեցին շուկային մօտ լինելով հնարաւոր եղած է բազմաթիւ կըրպակներ կառուցանել իր հողին վրայ, յորոց ժամանակին մինչեւ 1300 ոսկի վարձ առնուած է, այլ այժմ առեւտրական անկման պատճառաւ թէ վարձերն ալ ինկած են եւ թէ անվարձ մնացած կըրպակներ կան։

Արդիական վիճակ. Եկեղեցւոյ զանգակատան եւ նոր կալուածոց շինութեան եւ ինչ ինչ արտաքոյ ծախքերէն գոյացեալ պարտք մը կայ թաղական արկեղ վրայ վեց տարիէ ի վեր, որուն ջնջման համար թէպէտ նախորդ Վարչութիւնք եղանակներ խորհած են, սակայն խնդիրը վերջացած չլինելուն ներկայ Վարչութիւնն ալ նոյն խնդրով զբաղիլ պարտաւորած է։ Կալուածոց հասոյթներուն նուազումն վարժարանական ծախքերն ալ նուազեցնել պարտաւորած է։

Վարժարան. Ժամանակով հինգ վարժարան կայահէր Կարին, այլ այժմ երեքի վերածուած են։ Մանչերու մայր վարժարանն, որուն կցուեցան վերջերս Առաջնորդարանի ներքնայարկէն քանի մը սրահներ, եկեղեցւոյ բակին մէջն է եւ տասնեւմէկ սրահներու մէջ իր 600 աշակերտ կպարունակէ, ծաղկոցի, երեք ընտելարանի եւ երեք նախակրթարանի կարգերու վրայ։ Ուսուցանող պաշտօնայք են տասնեւչորս. Կրօնագիտութիւնը ստանձնած են Առաջնորդն եւ երկու քահանայք համառօտապէս դասախօսիլ։ Օրիորդաց վարժարանն ալ եկեղեցւոյ մօտ է, եւ վեց սրահներու մէջ իր 350 աշակերտուհի ունի, եւ կդասախօսեն մի տեսուչ եւ վեց

վարժուհիք։ Երրորդ վարժարանն կծառայէ եկեղեցւոյն հեռու եզող Չայգարայ կոչուած Թաղին, ուր մի տնօրէնի, երկու վարժապետի և մի վարժուհւոյ հսկողութեան ներքև կգտնուին 120է աւելի աշակերտք և աշակերտուհիք։ Վարժարանի ներքին կարգադրութիւնք և ուսումնական ծրագիրք չորս տարի յառաջ Դեր. Օրմանեանի ձեռօք հաստատուածներն են. այն ատեն ինքն վարժարանաց վերատեսչութիւնն ալ ստանձնած էր, այլ այս անգամ բաւական կսեպէ լոկ իբր առաջնորդ հսկողութիւն և այցելութիւն ընել։

Այլ վարժարան. Երկու տարին է ի վեր մասնաւոր վարժարան մ՚ալ կայ Մկրտիչ էֆէնտի Աշապալեանի ձեռօք բացուած, ուր 90է աւելի աշակերտք կյաճախեն, ամենքն ալ երթեւեկ, Թաղական վարժարանաց նման։ Իսկ Սանասարեան վարժարանն գիշերօթիկ է գլխաւորապէս, թէպէտ քանի մը ցերեկեայներ կան. աշակերտաց թիւն է 93, իսկ ուսուցիչք հինգ։ Իր կազմութիւնն և ամեն պարագայներն եւրոպական բարգաւաճ վարժարանաց կհամեմատին, և կարժէ որ ուրիշ անգամ յատկապէս խօսինք անոր վրայ։ Սանասարեան վարժարանն զետեղուած է ազգային շէնքի մը մէջ որ Վարչութեան կողմանէ թողուած է ձրի կիրառութեան, երեք տարուան պայմանաժամով։

Օտար վարժարան. Օտար վարժարանները կյիշեմք միայն այն պատճառաւ որ անոնց յաճախող աշակերտաց մեծամասնութիւնը հայ ընտանեաց զաւակներն են։ Մեր Կարնոյ Հայերն ալ Հայոցս ընդհանուր եղած նորասիրութիւնէն և օտարասիրութե-

նէն եւս մնալ չեն ուզեր և կլլեցնեն օտարներու վարժարանները։ Հռովմէական Հայք ունին մի մանչերու վարժարան Լազարեան կոչուած լատին կրօնաւորաց յանձնուած, և մի աղջիկներու վարժարան, Անարատ Յղութեան մայրապետներու ձեռաց տակ։ Աւետարանական Բողոքականք ունին նմանապէս մանչերու և աղջիկներու վարժարաններ ամերիկացի քարոզչաց և քարոզչուհեաց խնամոց ներքեւ։ Մկրտչական Բողոքականք ալ նոր վարժարան մի եւս բացին մանչերու համար։ Լատինք ունին մի աղջկանց վարժարան Քերց Ս. Յովսեփայ կարգի լատին մայրապետներու ձեռաց տակ։ Այդ ամեն վարժարանաց մէջ եղող հայ աշակերտներ և աշակերտուհիներ 100-120ի կհասնին, Թէպէտ ազգային վարժարաններէ աւելի բան չեն գտներ անոնց մէջ։ Այլ նկատելի է որ Բողոքականաց վարժարանները Թաղի գլուխ բռնած կողմը կմնան, որ Հայաշատ է, և Հայերը վարժարան չունին այն Թաղին մէջ, և եկեղեցին ալ բաւական հեռու կմնայ մանր տղայոց և աղջկանց համար։

Քահանայք. Քաղաքս միայն եօթը քահանայ ունի այժմ, որ քաղաքին ընդարձակութեան և բազմամարդութեան նայելով քիչ են, սակայն յարմար ընծայացուներ ալ կպակսին։ Այժմեան քահանայք հասակաւոր և փորձառու անձինք են և ժողովուրդըն ալ պատուով կնայի իւր քահանաներուն։ Ընդհանրապէս վիճակին քահանաներն ալ պակսած են. հինգ տարի առաջ 74 էին, այժմ 54 մնացած են։

Վանօրէնայք. Այդ քահանայից Թուոյն նուազումը և արժանաւոր քահանայացուներ ունենալու դիտումը

պատճառ եղաւ վանքերէն մէկուն մէջ ընծայարան մը բանալու խորհուրդին, որուն ետևէն են այժմ Առաջնորդն, Վարչութիւնն և Տնտեսականն, և սպասելի է յուսալ որ խորհուրդը յաջողի։ Կարնոյ դաշտի վանքերն երեք են. Ս. Լուսաւորչայ վանք, Մուտուրկա գիւղին մօտ քաղքէն ժամ մը հեռու, Կարմիր վանք յանուն Ս. Աստուածածնի, Հինք գիւղի մօտ, քաղքէն երեք ու կէս ժամ հեռու, և Խաչկավանք, համանուն գիւղին մէջ քաղքէն չորս ժամ հեռու հակառակ գծով։ Այդ վանքերը 20 տարիէ ի վեր գաւառական Վարչութեան ձեռքն են, այլ վանքերու պահպանութենէն պատ արդիւնք մը ունեցած չեն, թէպէտ ընդարձակ արտեր և մարգեր ունին, և քիչ մ'ալ ուխտաւորաց հասոյթ։ Այժմ այդ արդիւնքը ամփոփել և օգտակար ընել կկարծուի ընծայարանի մը բացմամբ, որ Կարմիր վանուց մէջ պիտի զետեղուի։

Գիւղօրէնք. Կարնոյ վիճակի գիւղօրէից մեծ մասը դէպ յարևմտեան հիւսիս երեք ժամու ճառագայթով գծուած կիսաբոլորին մէջ կպարունակի. 33 հատն եկեղեցի ունին, և 10էն 250 տուն բնակիչ, բովանդակ եբր 2000 տուն։ Ունին և թաղական խորհուրդ և վարժարան, ի բաց առեալ շատ քիչ ժողովուրդ ունեցողները։ Այդ շրջանակէն դուրս կգտնուին 2 եւս հեռաւոր գիւղեր ի հարաւ և մի ի հիւսիս, 2 գիւղ ի Թորդում և 3 ի Նարման։ Կարնոյ դաշտի 6—7 գիւղերու մէջ ցրուեալ քանի մի հայ տուներ եւս կգտնուին, ուրիշի հողը մշակելու համար գնացած։ Քաղաքին մօտաւոր Կան գիւղէն շատ են երկաթի արհեստաւորք որք առատ բա-

ղաք կուգան և երեկոյին կդառնան։ Չիֆթլիք, Օձնի և Կրիջք գիւղերէն են որմնադիր և հիւսն արհեստաւորներ, և Պատիչէն ու Դրւնիկ գիւղերէն ալ ջրեպանք կան. մնացեալք բոլոր հողագործ են։ Կարնոյ դաշտի հողագործը ճարտար է, աշխատասէր և ընտիր։

Ցարակից վիճակք. Զորս տարի յառաջ կեդրոնական Կառավարութեան որոշմամբ մերձակայ վիճակներէն Կեղի, Դերջան և Բասեն Կարնոյ առաջնորդարանի յանձնուեցան միայն ընթացիկ գործոց կարգադրութեան դիւրութիւն տալու համար, վասն զի փոքրիկ վիճակներ իրենք զիրենք լաւ կառավարելու չափ ներքին ոյժեր չունին. կանուխէն Սպերն ալ, և յետոյ Խնուսն ալ Կարնոյ յանձնուեցան. և թէպէտ այդ երկուքը վիճակներու ցուցակին մէջ տեղի չունին, սակայն միւս փոքր վիճակներու համանման կացութիւն ունենալնուն, Կարնոյ առաջնորդարանն անոնց մէջ ալ տեղական վարչութեան ձև հաստատած է արդէն։

Առաջնորդարան. Պէտք չեմ տեսներ ներկայել Պոլսեցւոց մեր առաջնորդը։ Գեր. Օրմանեան տարի ու կէս բացակայութենէ՝ յետոյ յաջող կերպով դարձաւ, և հազիւ երեք ամիսք են որ նորէն գործոց գլուխը անցած է, և կաշխատի եկեղեցական, վարժարանական և վանական գործառնութեանց նոր զարկ մը տալ, թէպէտ պարագայներն այնչափ նպաստաւոր չեն։ Առաջնորդական փոխանորդութիւնը յանձնուած է արժ. Արծնեանի որ Առաջնորդին բացակայութեան միջոցին յաջող և խոհական կերպով վարեց տեղապահութիւնը, և այժմ ալ

նոյն կերպով կվայէ գործակցութեան փոխանոր-դութիւնը. Ժողովներ և խորհուրդներ պարբերաբար իրենց նիստերը կգումարեն և ընթացիկ գործերով կզբաղին։ Միայն ընդհանուր ժողովը տակաւին ի նիստ չգումարեցաւ։

Մէջլիսի վէճեր. Կարնոյ առաջնորդարանն կուսա-կալութեան կեդրոնը գտնուելով, պարտաւորեալ է երբեմն կուսակալութեան սահմանին մէջ եղող ուրիշ վիճակներու գործերուն ալ օգնել կառավա-րական յարաբերութեանց մէջ։ Այդ վիճակներն են. Երզնկա, որուն առաջնորդը բացակայ է և կլսեմք թէ այլ ևս վիճակին գործերով չզբաղիր. Բաբերդ, որ երկու տարիէ ի վեր բոլորովին անտէր և անգլուխ կմնայ հակառակ վիճակայնոց շարունակ խնդրա-նաց. Պայազիտ, որ իւր առաջնորդն ունի, որ ա-ռանց աղմուկի և աղաղակի ընթացիկ գործերը կկարգադրէ, թէպէտ և երկրին անկեալ և աւերեալ վիճակը չներեր նմին օգտակար ձեռնարկներով զբաղիլ. այդ անձն է Գեր. Տ. Յովհաննէս Ծ. վար-դապետ Տ. Աստուածատուրեան. և վերջապէս Կա-մախ, որ տակաւին Սեպուհոյ Աւագ վանուց տա-նուտէրական քահանայութեան ժառանգութիւն է, և թէպէտ անցեալ տարիներու մէջ Երզնկայի Գեր. Առաջնորդին յանձնուեցաւ, սակայն սորա բացակա-յութեամբ անգործադրելի մնաց։

Այդչափը բաւական կհամարիմ Կարնոյ կացու-թեան վրայ ընդհանուր տեղեկութիւն մը տալու հա-մար. բայց հարկին և պատշաճին սոյն նիւթերէն ոմանց վրայ նորէն պիտի դառնամք։ Գաւառներու կացութիւնը ճշդիւ, առանց սնթեւեթի և առանց

անձնականութեանց խնդիրները պէտք է ծանօթանան ընդհանուր ազգին, և այս պէտք է լինի գլխաւորապէս գաւառացի թղթակիցների պաշտօնն։

---

## ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ։

Եթէ ունինք մի մեծ ցաւ, այդ մեր մէջ բաւականաչափ չասեմ մանկավարժ, գոնէ իրանց գործը—նպատակը հասկացող ուսուցիչներ չլինելու պակասութիւնն է։ Եւ եթէ մեր դպրոցական ուսումնական գործը այսօր մի նկատելի փոփոխութիւն չէ ցոյց տալիս դէպի առաջադիմութիւն, այդ անյաջողութեան, այդ յանցանքի մի խոշոր մասը պէտք է վերագրել մեր վերոյիշած ցաւին, այսինքն ուսուցիչների անպատրաստականութեան, իրանց պաշտօնի վեհութիւնը չհասկանալուն։ Բայց չպէտք է մոռանալ, որ միւս կողմից էլ կայ և մի ուրիշ ոչ պակաս քան այդ զօրաւոր հանգամանք, որը շատ անգամ ամենափորձված, լիովին իւր գործին նուիրված ուսուցչին անգամ յուսահատեցնում թուլացնումէ. ահա այդ հանգամանքի վերա կամենում եմ մեր ուսուցիչների և հոգաբարձութիւնների ուշքը դարձնել....

Աշակերտների ուսումնարանի և տան պարապմունքն այնպէս սերտ շաղկապված են (գոնէ պէտք է լինէին) միմեանց հետ, որ եթէ անհնար չէ, գոնէ շատ դժուար է որոշել, ինչպէս առաջնի, նոյնպէս և երկրորդի սկիզբն ու վախճանը։ Նոքա փոխադարձաբար լրացնումեն միմեանց. առանց մինի

—անշուշտ կիսատ կլինի աշխատութիւնը…։ Աւելորդ համարելով յիշելը թէ ինչպէս (իհարկէ խօսքըս մեզ վերա է) աներեւակայելի պահանջներ ունի մանկավարժութիւնը աշակերտի տան պարապմունքի պայմանների վերաբերմամբ, միանգամայն մեզ իրաւունք ենք համարում ընտանիքից պահանջել, գոնէ ամենաանհրաժեշտները — հանգիստ և լոյս։ Բայց տեսնենք թէ որքան մեր ընտանիքը բաւականութիւն է տալիս այս պահանջներին։ Մեր ուսումնարանների աշակերտները, սակաւ բացառութեամբ, աղքատ ընտանիքների զաւակներ են, իսկ այդպիսի ընտանիքների տնային կազմութիւնը յայտնի է թէ որ աստիճանի անյարմարութիւններ ունի. Շատ անգամ ամբողջ ընտանիքը ստիպված է մի սենեակի մէջ զետեղվել, այդ մի սենեակն է նոցա և ճաշարանը և ննջարանը և հիւրընդունարանը և առանձնասենեակը և ամենայն ինչը…։ Երևակայեցէք ձեզ այժմ աշակերտի դրութիւնը. Նա վերցնումէ իւր գրքերը և մօտենումէ մոմին դասերը պատրաստելու. բայց այդ նորան չի յաջողվի. եթէ հայրը իւր արուեստով կամ մի ուրիշ գործով չէ բռնել լոյսը, անշուշտ մեծ մայրը, մայրը, մօրաքոյրը կամ մի ուրիշ ով կարը ձեռին շրջապատել է նորան. Հաշուենք թէ նոքա ևս այնքան բարի գտնվեցան, որ թոյլ են տալիս նորան ճրագի լոյսից օգտվելու, բայց նորա քոյրերն ու եղբայրները, որոնց թիւը դժբախտաբար թէ բարեբաղդաբար մեր ստորին դասակարգի տներում աւելի է լինում համեմատաբար—վաղուց սպասումեն նորա գրքերը ձեռք առնելուն; իրանց սովորական խաղը սկսելու հա-

մար։ Բայց ենթադրենք թէ դորա առաջին էլ մի կերպով առնված է. Նա գիր ունի գրելու—բայց ոչ մի յարմար տեղ չկայ. ի՞նչ անէ խեղճը. տարա-փելի սպառնալիքներ է կարդացել ուսուցիչը նորան և անշուշտ չի վարանի իւր սպառնալիքը կատարելու առանց գործի հանգամանքները քըննելու... Նա դորա ճարն էլ գտնումէ մի կերպով—շնայելով որ իւր առողջութիւնը ամենամեծ վտանգների է ենթարկում. բայց տես, որ կամ գրիչն է փչացել երկարատև գործածութենից, կամ թուղթըն է վերջացել, կամ թանաքը շատ անգամ ջուր աւելացնելուց այնքան է սպիտակել, որ գրերը չեն երևում. կամ թէ... հազար ու մի բան, ո՞ր մին յիշեմ։ Եւ այս անյարմարութիւնները համարեա մեր բոլոր աղքատ ընտանիքներին յատուկ է, և եթէ մի քանիսը կան, որոնց տունը 2, 3 սենեակներից է բաղկացած, հաւատացած եղէք, որ նոցանից էլ կրկին միայն մին է լուսաւորված...։

Գուցէ առաջին անգամից շատ թեթև և լուրջ ուշադրութեան անարժան բան համարվին սոքա, բայց բաւական է մի փոքր միայն մտածել այդ հանգամանքի վերա, և այն ժամանակ կհասկանանք, թէ ինչպիսի անբուժելի ցաւեր է տանում մեր դպրոցական գործը մի կողմից, և միւս կողմից ինչպիսի՜ անդառնալի կորուստներ են ունենում աշակերտները։ Եւ այս ամենը լինումէ ի հարկէ, անգիտակցաբար, բոլորն ի շնորհս մեր տգիտութեան։ Ահա այս հանգամանքը գլխաւորապէս աչքի առաջ ունենալով, իմ մէջ մի հարց զարթեցաւ, թէ չէ կարելի մի՞թէ, եթէ ոչ ամբողջապէս գոնէ մասամբ

դորա առաջին առնել…։ Խնդիրը որքան նոր, այնքան և ծանր էր (գոնէ ինձ համար)։ Հարկաւոր էր աւելի քան թէ իմ ույժերը կներէին—բազմակողմանի քննութիւն։ Բայց ոչ մի առաջնորդ, և ոչ իսկ ընկեր կար. բայց և այնպէս ես իմ կարողութեան չափ աշխատեցի խնդիրը լուծել և մի որ և իցէ դրական եզրակացութեան հասնելու. և ինձ թւում է որ ես հասայ և...։ (Ես չեմ կամենում ասել, որ սորանից աւելի յարմարը չի լինի. իհարկէ կարող է լինել, և մենք չափազանց ուրախ կլինէինք եթէ մեր մանկավարժ ուսուցիչները (1) այնքան բարի կլինէին, որ ցոյց տային մեզ աւելի յարմար միջոցները։) Ես առաջարկում եմ ընդունել «ներողութիւն ճաշից յետոյ»։ Այս նշանակում է ճաշերից յետոյ ժողովել աշակերտներին (վնաս չի լինի եթէ հարուստներն ևս լինին. Նոցա մասին թէև ոչինչ չասվեցաւ, բայց նոքա ևս ոչ պակաս խանգարիչ պատճառներ ունին, չնայելով որ գլխաւոր յարմարութիւնները կան...) և մի որ և իցէ ուսուցչի հսկողութեամբ նոցա պարապեցնել…։ Դորա համար մի առանձին ծախս հարկաւոր չէ. ուսուցիչներն առանց այն ևս ճաշերից յետոյ ազատ են. փոխանակ այդ ազատ միջոցին այս ու այնտեղ քաշ գալու, մի մեծ գործ արած կլինէին, մանաւանդ որ նրանք ևս կարող էին այդ միջոցին զբաղել առանձին գործերով օրինակ ընթերցանութեամբ, գրութեամբ, աշակերտների տետրակները սրբագրե-

1) Խօսքս պրոֆեսօրների մասին չէ. ինչպէ՞ս նոքա չեն բարեհաճի իրանց օլիմպիական բարձրութիւնից մեզ հասարակ մահկանացուներիս վերա նայել անգամ…։ Մ. Պ.

լով... եւայլն։ Կարելի է գուցէ մի փոքր եւս ռոճիկ աւելացնել...։ Ինչ և լինէ. մտածեցի և արի. Հոգաբարձութեան Թոյլտուութեամբ մի քանի աղքատ տղաներին հրաւիրեցի ուսումնարան, այնուհետև բոլոր աղքատներին, իսկ 4—5 օրից յետոյ բոլոր աշակերտները սկսեցին յաճախել—թէ հարուստ և թէ աղքատ։ Նշանակումէ կարիքը զգացվումէր։ Այնուհետև ամեն օր,—բացի շաբաթ օրերից, ըսկըսեցին կանոնաւորապէս գալ և պարապել։ Աւելորդ է ասել, որ արդիւնքը զարմանալի է...։ Այսպէս ուրեմն, «սերտողութիւն ճաշից յետոյ» արդէն ընդունած պէտքէ համարել մեր ուսումնարանում. ցաւումենք միայն, որ աջակից չունինք...։ Մեր հոգաբար. և ուսուցիչների ուշադրութիւն ենք խընդրում։

Կամենումէինք մի քանի բաներ էլ ասել, առաջուց հասկանալով, թէ ինչ անյարմարութիւններ կգտնեն մեր յօդուածը կարդացողները այդ եղանակի մէջ, բայց ժամանակի սղութեան պատճառով այս անգամ բաւականանումենք այսքանով, թէև յօդուածը կիսատ է մնում...։

Մ. Պ.

---

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՆԻՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ։

Մի Փրանսացի ուսուցիչ պ. Ժ. Մանիւէլ, Հավր քաղաքի ուսուցչական ժողովում պ. Նէգառի առաջարկած հարցին նամակով պատասխանելով յայա-

նումէ թէ իւր բնակած տեղի ամսական ինչ է ծախսում իւր սննդի համար մի ուսուցիչ իւր ընտանիքով (հայր, մայր, 8—12 տարեկան երկու մանուկներ)։

Հաց 75 կիլօ (մի կիլօ 2 գրվանքա). 26 Փր. 25 սան.
Գինի 60 լիտր . . . . . . . . 34 Փր. 80 ս.
Միս 12 կիլօ . . . . . . . . 18 Փր. 40 ս.
Կաթ 30 լիտր . . . . . . . . 3 Փր. 75 ս.
Կարագ 4 կիլօ . . . . . . . . 8 Փր. 80 ս.
Ձուեր 60 հատ. . . . . . . . 4 Փր. 15 ս.
Գետնախնձոր 90 կիլօ . . . . . 1 Փր. 80 ս.
Զանազան կանաչեղէն, սալաթ . . 2 Փր. 20 ս.
Մի թռչուն . . . . . . . . . 3 Փր. 50 ս.

Ընդամենն 103 Փր. 65 ս.

12 ամիսների համար կանէ 1243 Փրանկ 80 ս.։

Եթէ եսխալ. Նեղաւին նեղութիւն տալ չվախենայի, կաւելացնէի թէ հարկաւոր է, որ ուսուցչի տանն եւ լինի մի փոքր շաքար, մի փոքր սուրճ և մի բաժակ խմիչք, վայելչապէս ընդունելու 'օրինեցէ այցելու բարեկամին։ Իմ վերաբերմամբ կասեմ ձեզ, շարունակում է նամակագիր ուսուցիչը, որ ես այն չափազանց բազմաթիւ ուսուցիչներից եմ, որոնց ռոճիկը 900 Փրանկ է, և ինձ շատ բաղդաւոր պիտի համարեմ, որ չունիմ ոչ երեխաներ, և ոչ կին։

Արդարև հետաքրքիր է իմանալ Փրանսիական ուսուցիչների ռոճիկների քանակը։ 1870 թ. սահմանվեցաւ, որ ուսուցչական ռոճիկը 1871 թ. յունվարի մինից 700 Փրանկից պակաս չլինէր, իսկ 5 տարի ծառայածները—ոչ պակաս 800 Փրանկից։ 1873 թ.

որոշվեցաւ 4 կարգի բաժանել ուսուցիչներին, հետեւեալ ռոճիկները յատկացնելով. դ. կարգի ուսուցիչները ստանումէին 900 ֆրանկ, գ. կարգի ուսուցիչները—1000 ֆրանկ, բ. կարգի ուսուցիչները—1100 ֆրանկ, ա. կարգի ուսուցիչները—1200 ֆր.։

Ուսուցչուհիները բաժանուած են 3 կարգի։ գ. կարգի ուսուցչուհիները ստանումեն ոչ պակաս 700 ֆրանկից, բ. կարգի ուսուցչուհիները—800 ֆրանկ, ա. կարգի ուսուցչուհիները—900 ֆրանկ։ Գիւղի ուսուցիչները ստանումեն 800 ֆրանկ և ուսուցչուհիներն 650 ֆրանկ։ Ուսուցիչը և ուսուցչուհին 5 տարի անշուշտ պիտի ստորին կարգում ծառայէ հետեւեալ կարգերն անցնելու համար։ Ռոճիկն աւելանումէ վկայական ունեցող ուսուցչին, որոշ անձնական արժանաւորութիւն ունեցող ուսուցչին և թանկութիւն տիրող տեղերի ուսուցիչներին։ 1875 թ. ուսուցչական ռոճիկներն աւելացան։ 1882 թ. հետեւեալ ցուցակից կարելի է տեսնել թէ ֆրանսական ուսուցիչներն որքան ռոճիկներ էին ստանում նոյն թուին։ Մօտ 1000 ֆրանկ ստանումէին 14,878 ուսուցիչներ և 23,586 ուսուցչուհիներ։ 1300 ֆրանկ ստանումէին 21,429 ուսուցիչներ և 5038 ուսուցչուհիներ։ 1600 ֆրանկ ստանումէին 7195 ուսուցիչներ և 1492 ուսուցչուհիներ։ 1900 ֆրանկ ստանումէին 2338 ուսուցիչներ և 1447 ուսուցչուհիներ։ 2200 ֆրանկ ստանումէին 1255 ուսուցիչներ և 473 ուսուցչուհիներ։ 2200 ֆրանկից աւելի ստանումէին 1506 ուսուցիչներ և 427 ուսուցչուհիներ։ Եթէ ֆրանկը 25 կօպէկ հաշուենք, 1000 ֆրանկը կանէ 250 մանէթ, կամ ռուսական թղթադրամի ներկայու-

մըս ընկած լինելով մօտ 400 մանէթ։ Սա ամէնաստո-րին ռոճիկն է։ Ամէնաբարձր ռոճիկն 2200 ֆրանկ է, 425 մանէթ կամ ռուսական Թղթադրամի ըն-կած լինելով 880 մանէթ։ Ուրեմն բազմակողմանի կերպով լուսաւորված, մանկավարժօրէն զարգացած, բազմաթիւ պիտոյքներ զգացող, քաղաքակրթված եւ անդադար աշխատող ֆրանսական ուսուցիչը ստա-նումէ առ նուազն տարեկան մօտ 400 մանէթ և առ առաւելն 800 մանէթ։ Թող Հայ ուսուցիչներն հա-մեմատեն իրանց բարոյական, մտաւորական զարգա-ցումն, ֆրանսական նախադծերի ընդարձակ պա-հանջները և իրանց ոչինչ նախադծով կապված լի-նելը և կատարեալ անպատասխանատուութիւնը և յետոյ ասեն առանց կարմրելու թէ իրանք որքան հարիւրներ աւելի են ստանում քան թէ ֆրանսական ուսուցիչները։

Ֆրանսիայում ուրիշ երկու շատ օգտաւէտ հաստա-տութիւն կայ. Նախ ուսուցիչների օգնականներ և օգ-նականուհիներ, որոնց նիւթական դրութիւնը բար-ւոքվեցաւ 1870 Թուից, իսկ 1871 Թուից պարտա-ւորված են ամէնքն անշուշտ ուսուցչական վկայա-կան ունենալ։ Նոյն 1881 Թուից սահմանված է մի նոր պաշտօն—այնպիսի ուսուցիչների և ուսուցչուհի-ների, որոնք հիւանդացած կամ որևիցէ պատճա-ռով ուսումն ընդհատած ընկերների պարտքերը պի-տի կատարեն դպրոցներում։ Նոքա գտնվումեն նա-հանգական տեսուչների տնօրէնութեան ներքոյ։ Չորսհարիւր դպրոց ունեցող նահանգում նշանակ-ված է մի ուսուցիչ, որը իւր ընկերների պաշտօն պիտի վարէ։ 600 դպրոց ունեցող նահանգում նշա-

նակված են 2 ուսուցիչ։ 600 ից աւելի դպրոցներ ունեցող նահանգում սահմանված է 3 այսպիսի պաշտօն։ Իսկ ուսուցչուհիներն, որոնք միւս ուսուցչուհիների պաշտօն պիտի վարեն, երկու պիտի լինին իւրաքանչիւր նահանգում։ Այս ուսուցիչները ստանումեն տարեկան 1200 ֆրանկ, ուսուցչուհիները 1000 ֆրանկ, նոցա ճանապարհածախսը նահանգական հաշուով է լինում։ Ֆրանսիան այսօր ազգային լուսաւորութեան մասին մտածելու և ամենայն եռանդով արիաբար ներգործելու վերաբերմամբ դըպրոցներով վերանորոգվելու, զօրանալու և բարձրանալու նպատակով, առաջին տեղ է բռնում Եվրոպայում։ Ուստի թէ ռուսական և թէ եվրոպական մանկավարժական պարբերաթերթերը զբաղած են միշտ ֆրանսական դպրոցներով։ Մանկավարժութիւնը նա կարեւոր է համարում հայ ուսուցիչների ուշքը դարձնել անդադար Ֆրանսիայի վիթխարային ուժգնութիւններին դպրոցական բարեկարգութեամբ վերանորոգվելու համար։

Ֆրանսիայի սկզբնական դպրոցներում սովորումեն այսօր 4 միլիօն 587,545 աշակերտներ (այսքան են գրեթէ դպրոցական հասակ ունեցող բոլոր մանուկներն Ֆրանսիայում)։ Այս 4 միլիօն 587,545 աշակերտները սովորումեն 78,456 դպրոցներում։ Հազիւ մի հարիւր փոքրիկ գիւղեր կգտնվին, որտեղ չկայ դպրոց. ներկայ տարիս վերջացած չի լինի, որ նոքա էլ դպրոցներ կունենան։ Նոյն դպրոցներում սովորեցնումեն 132,580 ուսուցիչներ և ուսուցչուհիներ, որոնցից միայն 7,634 չունին վկայական։ Այս թւում չեն հոգևոր դպրոցների աշակերտները, որոնց թիւը

915,492 է։ Հեռու չէ այն օրը, երբ Ֆրանսիայում պարտաւորական ուսման օրէնքի շնորհով դժուարութեամբ կգտնվի անգրագէտ անձն։ Ֆրանսիայի ամեն նահանգներում մանկավարժանոցներ հաստատվեցան. Հարկաւոր է դարձեալ քանի մի տարի ժամանակ, որ նոքա պատրաստել կարողանան այնպիսի ուսուցիչներ և ուսուցչուհիներ, որոնք իրանց բարձր կոչմանը բոլորովին համապատասխան լինին։

---

## ՀՐԱՒԷՐ ԴԻԷՊԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑ։

Սրտի ցաւով պէտք է խոստովանել, որ մեր ներկայ կեանքի մէջ երկրագործութիւնը կորցրել է իւր բարձր նշանակութիւնը։ Այդ կողմից հայ բնակած երկիրը համեմատաբար լուսաւորեալ ազգերի, համարեա յետին տեղն է բռնում։ Ով որ ծանօթ է երկրագործ դասի աշխատութեան եղանակների հետ, մեզ հետ կվկայէ այդ ցաւալի ճշմարտութիւնը։ Այո, երկրագործութիւնն մեղանում աննախանձելի դրութեան մէջ է։

Հայ գիւղացին, որ այնքան ջերմ սրտով սիրում է իւր մայր հողը, որից բաժանվելը նորա համար մահ է, նա այժմ տրտունջներ է բարձրացնում, դժգոհ է իւր վիճակից։ Շատ անգամ պատահած է խօսելու մեր հայրենակից գիւղացիների հետ, և ահա ինչ է ասում նա. «Թէ դրպանումս փող կլինէր, կտայի տղայիս խանութ իւր համար հանդիստ ապրէր»։ Երբ նորան հարցնումես—ինչի՞ ես այդպէս մտա-

ծում, ինչի՞ ես կամենում թողնել այն արուեստը, որով քո նախահայրերն են ապրել: Նա պատասխանում է. «Հապա ինչ անեմ, ա՛յ քեզ մատաղ, գուցէ մեր պապերը կոյր էին, մենք էլ կոյր մնանք (նա կարծում է թէ զորանով իր աչքերը բացվել են, որովհետև համեմատաբար նոցա խանութպանները բարւոք կեանք ունին): Տեսնում ես քո հայրը ինչ խեղճ մարդ է, քեզ տուեց ուսման, գնացիր մարդ դարձար, որ մնայիր դու էլ մեզ նման սխալ խաչվէիր արևի տակին. մենք, մէկ էլ որ, քո մատաղ, չարչարվումենք, բայց տակին բան չկայ (օգուտ չկայ): Դէհ մեր վիճակը տես, մեր ազգաներին էլ ազբա»: Գիւղական կեանքին ծանօթ անձը, կարող է ասել որ այդ տրտունջը մասամբ իրաւացի է: Աւելորդ է նկարագրել այստեղ հայ գիւղացու աշխատութիւնը և չնչին վաստակը նորա չարչարանքին համեմատ:

Երկրագործ գիւղացին վարում ցանում է այնպէս, ինչպէս որ գործնականապէս տեսել սովորել է իր հայրերից, առանց մի որ և է հասկացողութիւն ունենալու երկրագործութեան արուեստի մասին: Նորան դժուար է համոզել մինչև թէ երկրագործութեամբ կարելի է լաւ ապրել, որովհետև նորա՛ կարծիքով երկրագործ լինել կնշանակէ չարչարվել, այրվել, թշուառ և վերջապէս քաղցած անցուցանել օրերը, որին ապացոյց են հետևեալ խօսքերը, որ գիւղացին անդադար կրկնում է խօսակցութեան մէջ. «մենք օրական մշակ ենք»: Երբ գիւղացուն պատմում ես թէ այժմ աշխարհը լուսաւորված է, թէ ուրիշ երկրներում երկրագործութիւնը

ուրիշ կերպով է, թէ նորա ծանրութիւնը շատ կէտերում թեթեւացրած է, նա զարմացմամբ ասումէ. դէ ո՞ւր է, որ մեզանում այդպիսի բան չկայ. կարդացող տղաներ էք, սովորեցէք եկէք մեր տղաներին էլ սովորեցրէք, որ իմանամ թէ ճշմարիտ է։

Ցաւալի է, որ մեր երիտասարդները, որոնց վերա լարված են Հայ գիւղացու աչքերը, որոնց փոքր ի շատէ յայտնի է երկրագործութեան անհրաժեշտութիւնը և տեղն ընկած ժամանակը նոքա խոստովանումեն այն մեծ օգուտը, որը կարելի է ձեռք բերել երկրագործութեամբ, նոքա աւելի ուշք չեն դարձնում այդ արուեստի վերա։ Եթէ ոչ ամենքը, մեծամասնութիւնը միջնակարգ ուսումն առնելուց յետոյ գնումեն ուսումնասիրելու այնպիսի մի ճիւղ, որի մէջ ակնյայտնի երեւումէ իրանց անձնական օգուտը։ Շատերը կասեն, թէ առանց երկրագործների էլ բանը գլուխ կգայ, մեզ աւելի հարկաւոր են բժիշկներ, փաստաբաններ եայլն եայլն։ Շատ հասկանալի է այդ գիտնական անձների անհրաժեշտութիւնը, բայց նոցա քանակութիւնը և երկրագործների չնչին քանակութիւնը հաշուի առկ դնելով, կհամոզվինք, որ պարտական ենք վերջապէս ուշք դարձնել այս յարգելի արուեստի վերա. որանից առաւելապէս կախումն ունի ազգի կեանքի բարւոքումն։ Զուր կլինէր մեզ տքնել ազգի բարօրութեան և երջանիկ ապրելու համար, առանց մեր մայր հողը և նորան մշակելու միջոցներն ուսումնասիրելու։ Հռովմը իւր գագաթնակէտին հասաւ սիրելով իւր մայր հողը և նորան-մշակելու եղանակը։ Այդ արուեստը առաջ տանելու համար,

կարգված էին առանձին մարդիկ, որոնք վերահըսկելով վարձատրումէին ջանասէրներին մրցանակներով, իսկ ծոյլերին պատժելով։ Այս փառաւոր շրջանի ծնողներ են Ցինցինատ և Բրուտոս. և ահա ինչ է ասում Բրուտոսը. «Երկիրս ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդկութեան մայր. Նա անխտիր կերակրումէ ամենքին, միայն այն ժամանակ, երբ մարդ ճանաչումէ նորան իբրև մայր....» Աւելորդ է այս հարցի վերա երկար կանգնել, քանի որ համարեա բոլորին պարզ է այս արուեստի բարձր նշանակութիւնը։ Հայ երիտասարդներ, սիրենք մեր մայր հողը, աշխատենք սովորել նորան մշակելու եղանակները, և այն ժամանակ մենք կարող ենք երջանիկ ապրել....

Աւելորդ չէ լինի ծանօթացնել ցանկացողներին Ումանի ուսումնարանի հետ։ Ումանը գտնվումէ Կիէվի նահանգում. քաղաքը իւր դիրքով գեղեցիկ է, բնակիչների մեծամասնութիւնը հրէաներ են։ Այստեղ է գտնվում Царицынъ чадъ—որը համարվումէ արուեստի հրաշալիք։ Ջուրը, օդը լաւ են։ Ումանը ունի պրօգիմնազիօն, երկու օրիորդական ուսումնարան, երկու տղաների (միջնակարգ) և երկրագործական և այգեգործական ուսումնարան, որը ոչ միայն Ումանի մէջ, այլ Ռուսիայի մէջ մեծ դիրք ունի։ Այստեղ տեսականին կից են և գործնական պարապմունքը. ուշք են դարձնում գլխաւորապէս այգեգործութեան և երկրագործութեան վերա։ Բացի վերոյիշեալներից սովորեցնումեն նոյնպէս և անտառաբանութիւն (ЛѢСОВОДСТВО), շերամապահութիւն, անասնապահութիւն, և այլն, բացի նըհա-

նուր գիտութիւններից։

Ուսումնարանն ունի լաւ սեպհական հողերը, որտեղ աշակերտները գործնականապէս պարապումեն, ունի ագարակ (ферма), հարուստ գրատուն, թանգարան, որտեղ գլխաւորապէս ժողովվումէն զանազան հանքեր, քիմիական գործարան (лабораторія), և այլն։ Ջերմանոց (оранжерея) 150—200 հազար րուբլի արժողութեամբ։ Ուսումնարանը 5 դասարանից է բաղկացած. իսկ վեցերորդ տարին գործնական տարի է անուանվում (практическій годъ)· այդ տարում աշակերտները պարտաւոր են որ և է տեղում աշխատել գործնականապէս և ներկայացնել իրանց հաշիւը վարչութեան, որից յետոյ կարող են վկայական ստանալ։ Առանց քննութեան առաջին դասարան ընդունվումեն այն աշակերտները, որոնք ներկայացնումեն վկայական քաղաքային ուսումնարանի (городское училище)։ Առաջին դասարան ընդունվումեն 14—16 տարեկան պատանիներ։ Աշակերտները լինումեն գիշերօթիկ և երթևեկ։ Գիշերօթիկները վճարումեն տարեկան 150 մանէթ, ամեն բան պատրաստ, երթևեկները վճարումեն 20 մ.։ Այստեղ համեմատաբար Ռուսիայի միւս քաղաքներին կարելի է շատ դիւրին ապրել—միջակ կեանք անցուցանելու համար (բացի հագուստից) կարելի է ամսական 15 մանէթով ապրել։ Այստեղ ընդունվումեն Կովկասի հաշուով 4 աշակերտներ։ Եկող տարվան համար բացվելու է 2 տեղ։ Նոքա, որոնք ցանկութիւն ունին Կովկասեան սաներ նշանակվելու, թող խնդիր տան Կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձուին (Его Превосходительству, Г-ну Попечителю Кав-

казскаго учебнаго округа, въ Тифлисѣ).

Ուսումնարանի ծրագիր ցանկացողները կարող են դիմել այս հասցէով. Умань (Кіевск. губ.). Воспитаннику училища земледѣлія и садоводства, *Багарату Артазяну:* Ընդունելութեան քննութիւնները սկսւում են օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը։

Պատրաստութեան կարօտութիւն ունեցողներին մենք յանձն ենք առնում ձրիաբար պատրաստել, եթէ նոքա կբարեհաճին աւելի շուտ գալ այստեղ։

Ցանկալի էր, որ մեր Հայերը, առանձնապէս կալուածատէրերը—այգետէրերը ուշք դարձնէին և օգուտ քաղէին սորանից, ի նկատի ունենալով մեզանում հմուտ գործիչների պակասութիւնը և մանաւանդ օտար ազգերի արշաւանքները մեր երկրի արդիւնաբերութիւնների վերա։

Ուման։ Երկրագործ բարեկամներ։

Այս հրաւէրի սկիզբն արդէն տպւած էր, երբ ասացին մեզ, որ Թիֆլիսի մի թերթում նոյնը տպւած է, ուստի անհնարին էր հանել, և ահա աւելորդաբար միևնոյնը երկու տեղ հրատարակւած է տեսնւում... Խմբ.

---

## Ա Ղ Ք Ա Տ։

Վշտալի դէմքով, շորը պատառոտած,
Ցաւագար կուրծքում անհամար հոգսեր,
Ծերուկ աղքատը ձեռին գաւազան
Հազիւ փոխումէ դողդոջուն քայլեր։

Խորին, մեծամեծ կնճիռներ արձակ
Փռվել են նորա մաշված երեսին,
Մարած աչքերը յօնքերի տակից
Կարծես խնդրումեն հայ հայ ամենքին։
Ձեռը դէմ արած և վիզը ճկած,
Ողորմութիւն է խնդրում անցնողից,
Բայց չեն կամենում լսել խղճուկին.
Ո՜հ անգութ մարդիկ զզվումեն նրանից...։
Գեղեցիկ գարուն դեռ նոր էր մտել,
Մեռած աշխարհին կրկին զարթեցրել,
Աղջիկ, պատանի, մանուկներ, մեծեր,
Նաշխուն հագուստով ամեն տեղ լցրել։
Տեսնումէ ամենն հանգած ծերունին,
Արտասուք աչքում մնում քարացած...
Հասնումէ գիշեր... աստղեր են ցոլում...
Փաղոցում անշունչ դին է երևում...։

Թիֆլիս. Սրինգ.

---

## ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԱՊՐԵԼ ԲԱԽՏԱՒՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

### Բնաւորութիւն։

Ամէն կողմից ամենարժանաւոր մարդիկ աշխատասէր, արդարասէր և խիստ ազնիւ մարդիկ են։ Նոքա արժանի են ընդհանուր յարգանքի։ Այսպիսի մարդիկներին չէ կարելի չհաւատալ, չէ կարելի չսիրել, չէ կարելի չցանկանալ նոցա նման դառ-

նալ։ Նոքա են պահպանում ամէն լաւ և բարի բան աշխարհում և եթէ նոքա չլինէին, ապրել էլ չարժէր։

Ո՛չ ոք պարտաւոր չէ լինել հարուստ, խելացի կամ գիտնական, բայց ազնիւ մարդ լինել պարտաւոր է իւրաքանչիւրը։ Լաւ սնային կեանք ունենալու համար անշուշտ պէտք է ունենալ բարի սիրտ, առողջ խելք, համբերութիւն և արդարամտութիւն։ Բարութիւնը կերպով իմն անբաժան է խելքի հետ, սա կենսական հանգամանքների միաւորութիւն է հոգեկան պայմանների հետ։ Խելքի և բարութեան մերձաւորութիւնը, միութիւնը շատ բանի մէջ է երևում։ Մենք շատ անգամ տեսնումենք, որ խելքը մարդին բարի է շինում և բարութիւնը շատ անգամ փոխարինումէ խելքը։

Բնաւորութիւնը կազմվումէ զանազան մինչև անգամ ամենամանր հանգամանքների ազդեցութենից։

Օր չէ անցնում, որ մարդս չսովորէր ինչևիցէ լաւ կամ ինչևիցէ վատ բան, բայց լաւ բնաւորութիւն կազմել իւր մէջ առանց աշխատութեան և ուժգնութիւնների ոչ ոք չէ կարող։ Սորա հետ շատ անգամ կպատահին դժուարութիւններ և փորձութիւններ, որոնց դէմ կարևոր է անշուշտ պատերազմել, նոցա յաղթելու համար։ Բայց հոգով հզօր և ազնիւ մարդը պէտք չյուսահատի, այլ հաստատապէս պէտք յուսայ յաջողութեան։

Նոյն ինքն ցանկութիւնն առաւել բարի և ազնիւ դառնալու ոգևորումէ և հզօրացնումէ մեզ, և մենք լաւագոյն ենք դառնում ամէն անգամ, երբ

ցանկալի նպատակին հասնելու աւելի ուժգնութիւն ենք բանեցնում։

---

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ․

Ս. Խաչ, Կ. Մ. Յաւեցինք ձեր տուած տեղեկութիւնը կարդալով։ Երբ դպրոցները փակվեցան, ամսագրիս խմբագրողն իբրև տեսուչ և հոգաբարձութեան նախագահ, որոշեց, որ ուսուցիչներն իրանց ռոճիկներ ստանան մինչև դպրոցական տարվան վերջը, սեպտեմբերը։ Հոգաբարձուներից աւելի անձնական կիրքերին գերվածներն, հակառակումէին, բայց ուշք չէինք դարձնում։ Ահա այդ միջոցին էր որ հասաւ Ս. Սինօդի տնօրէնութիւնը, որով պատուիրվումէր հատուցանել բոլոր տեսուչներին, ուսուցիչներին և վարժուհիներին լիովին տարեկան ռոճիկը 31. սեպտ. և հոգաբարձութիւնները, դպրոցական կահկարասիք եկեղեցական երեսփոխաններին յանձնելուց յետոյ, իրանց պաշտօններից արձակված համարել։ Ուրեմն ինչ հիմամբ հրամայված է ձեր ուսուցիչներից ռոճիկներ կարճեցնել դպրոցների փակման օրից։ Իրաւունքը ձերն է. բողոքեցէք և ստացէք։

Թիֆլիս, Ց. Մ. Անհնարին համարվեցաւ ձեր օրինակելի դասը կրօնից զետեղել այս տետրում, որտեղ արդէն բաւական ընդարձակ մի դաս տպվեցաւ։

Ս. Խաչ, Կ. Մ. Ձեր երկուքեան յօդուածներ ստացանք. «Կրթութեան քանի մի հիմնաւոր հարցեր» անունով յօդուածը մի ուրիշի ձեռով հասցրած ար-

դէն կարդացած կլինիք Մոնչավարճանոյէ 2 տետրում։

Մոնչավարճանոյէ ընթերցողներին։ Յօդուածների բազմութեան պատճառով այս տետրում խմբագրական յիշատակարան չտպվեցաւ։ Ցաւումենք առաւելապէս նորա համար, որ համաշխարհային մեծ բանաստեղծի—Վիկտօր Հիւգօյի—մահի մասին մեր խօսքը չկարօղացանք ասել այս անգամ։

Խմբագրող-Հրատարակող ԽՈՐԷՆ Ծ.Վ.ԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ։

Дозволено ценз. Тифлисъ, 15 Іюля 1885 г.

Типографія М. Каламкарова. Алек. ул. д. № 2.

## ,,ԱՐՄԵՆԻԱ‘‘

Առաջիկայ օգոստոս 1/20 յուլիսին Մարսէյլի մէջ ,,ԱՐՄԵՆԻԱ‘‘ անունով հայերէն մի լրագիր պիտի հրատարակվի շաբաթը երկու անգամ, համարատուութեամբ Ֆէլիքս Անֆանտէնի և խմբագրութեամբ Մ. Փորթուգալեան։ Տարեկան բաժանորդագինն է 10 րուբլի թղթադրամ։ Խմբագրութիւնն ինքը կվճարէ փոստի ծախսը։

,,ԱՐՄԵՆԻԱ‘‘ի նպատակին, ուղղութեան և պայմաններին տեղեկանալ ցանկացողներին ձ ր ի ա պ է ս կուղարկվի այդ լրագրի շրջաբերական յայտարարութիւնը։ Կարելի է դիմել խմբագրութեան ֆրանսերէն հետևեալ հասցէով.
M. Portougalian, Rédacteur du journal ,,Arménia,,
rue Arménie, 2 (Hôtel Forer) Marseille (France).

---

## ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ։ Տարեկան գինն է 4 ռ.։ Հրատարակվում է Պօլսում։

---

# ԱՐԱՐԱՏ

Դաւանական, պատմական, բանասիրական ամսագիր։ Տարեկան գինը Ռուսաստանում 4 ռ.։ Հասցէն. Св. Эчміадзинъ, Ред. ,,Араратъ“.

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ.

1885 Թ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ ամսագիրը հրատարակվում է գլխաւորապէս մանկավարժական ուղղութեամբ: Իւրաքանչիւր երկամսեայ մի տետրը երկու թերթից է: Յուլիս—օգոստոս ամի[illegible]է հրատարակվել:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԻ տարեկան գինն է 3 մանէթ:

Ստորագրվողները յատկապէս պէտք դիմեն այս հասցէով. Ахалцихъ. Редакціи Манкаваржаноцъ.

Խմբագրող-Հրատարակող ԽՈՐԷՆ Ծ. Վ. ԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ:

---

Համակեդրոնական Պրոգրամներ—Ծրագիրներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դաստիարակների համար հրահանգներով, Խորէն Ծ. Վարդ. Ստեփանէի աշխատութեամբ յօրինած, վաճառվում են Թիֆլիսում Կենդրոնական Գ[illegible]նոցում (Центральный Книжный магазинъ) և Զաք. Գրիգորեանի Կովկասեան Գրավաճառանոցում (Кавказская Книжная торговля З. Григурова). Գրքոյկի գինն է 50 կ.

---